



## ՄԵՐ ԱՆԿԻԻՆԷՆ

### «Մեր Կեանքերու Համար» Քայլարշաւը

Փետրուար 14-ին, Ֆլորիտայի Փարքլենտ քաղաքի երկրորդական վարժարանէն ներս կատարուեցաւ դպրոցական հերթական սպանդը: Նախկին ուսանողներէն մէկը, կիսա-ինքնագործ հրացանով մուտք գործելով դպրոց, սպանցեց 17 ուսանողներ: Այս դէպքը կու գար միանալու անցնող տարիներուն տեղի ունեցած դպրոցական սպանութիւններու երկար շարքին: Սակայն, այս վերջին սպանդը ծնունդ տուաւ ուսանողական հսկայ շարժումի մը, որ իսկապէս անակնկալի բերաւ երկրի քաղաքական ղեկավարութիւնը: Կը կարծուէր թէ, նախորդներուն նման այս իրադարձութիւնը եւս կարճ ժամանակ ետք մոռացութեան պիտի մատուցուի ու շարժումը մարի, սպասելով նմանատիպ յաջորդ սպանդին, որ դարձած է Ամերիկեան կեանքի ամենէն խոցելի կողմերէն մէկը:

Ուսանողական շարժումը քառասուն օրուայ մէջ կարողացաւ ընկերային ցանցերու միջոցաւ զօրաշարժի ենթարկել այնքան շուտով որ Նախագահ Նախագահներու երկուստարդութիւնը եւ անցեալ Շաբաթ օրը՝ Մարտ 24-ին, կէս միլիոնի հասնող Ամերիկացիներ հաւաքուեցան մայրաքաղաք Ուաշինգթոնի մէջ, մասնակցելու համար «Մեր կեանքերու համար» քայլարշաւին: Նոյն օրը աշխարհի 800 քաղաքներուն մէջ տեղի ունեցան զօրակցական ցոյցեր՝ միլիոնաւորներու մասնակցութեամբ:

Քայլարշաւին յաջորդած հանրահաւաքի ընթացքին ելոյթ ունեցան բացառապէս երիտասարդներ, որոնք կը պահանջէին Գոնկրէսի անդամներէն եւ Սպիտակ Տունէն նոր օրէնքներ մշակելով սահմանափակել զէնքերու ազատ վաճառքը յատկապէս երիտասարդ տարիք ունեցողներուն:

Այս շարժումի կազմակերպիչներու յատկանշիչներէն մին այն է, որ անոնք կը խոստանան չբաւարարուիլ միայն բողոքի արտայայտութիւններով եւ վճռած են իրենց ձեռք ձգած հարթակը վերածել քաղաքական բազուկի՝ Նոյեմբերին տեղի ունենալիք Գոնկրէսի ընտրութիւններուն պայքարելով այն բոլոր թեկնածուներուն դէմ, որոնք միլիոնաւոր տոլարներու ընտրարշաւի նպաստներ ստանալով զէնք արտադրող ընկերութիւններու լոպպիստական կազմակերպութեան NRA-էն, իրենց լռութեամբ եւ անգործութեամբ վաճառքի հանած են քաղաքացիներու կեանքը:

Ամերիկայի մէջ, ոչ մէկ քաղաք եւ ոչ մէկ դպրոց ապահովագրուած է նման սպանդներէն: Այս շարժումը պէտք է խրախուսէ նաեւ Ամերիկահայ ուսանողութիւնը, որպէսզի անոնք եւս մասնակից դառնան քաղաքական կարեւոր այս գործընթացին:

«ՄԱՍԻՍ»

## Երտողանը Անձամբ Հրահանգած Է Հայոց Ցեղասպանութեան Բանաձեւին Դէմ Պերլինի Մէջ Ցոյցեր Կազմակերպել



Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայէպ Էրտողան անձամբ հրահանգած է՝ Գերմանիոյ մէջ ցոյցեր կազմակերպել

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայէպ Էրտողան անձամբ հրահանգած է, որ Գերմանիոյ մէջ բողոքի ցոյցեր կազմակերպուին՝ 2016 թուականի Յուլիանի Պոլսուտեսթակի մէջ Հայոց ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեւի ընդունման դէմ, գրած է գերմանական Der Spiegel-ը:

Գերմանիոյ ոստիկանութեան կողմէն ձայնագրուած է Էրտողանի Յուլի 1-ին կատարած հեռաձայնային գրոցը (Պոլսուտեսթակի մէջ Հայոց ցեղասպանութիւնը ճանչցող բանաձեւի ընդունումէն մէկ օր առաջ) Թուրքիոյ իշխող «Արդարութիւն եւ Զարգացում» կուսակ-

ցութեան պատգամաւոր Մեթին Քիւլունքի հետ: Վերջինս այդ շրջանին Պերլին էր եւ բողոքի ցոյցեր կը կազմակերպէր:

Der Spiegel-ը հրատարակած է Հեսսեն երկրամասի ոստիկանութեան ձայնագրած հեռախօսային գրոցներէն մէկը սղագրութիւնը, որ ենթադրել կու տայ, թէ Էրտողանը անձամբ ղեկավարած է բողոքի ցոյցերը:

Հեսսենի ոստիկանութիւնը լսած է, թէ ինչպէս Յուլի 1-ին, 23:30-ին Էրտողանը կապ հաստատած է Քիւլունքի հետ: «Ինչպէ՞ս

Շար.ը էջ 5

## Մարտի Մէկին Կրակող Ցուցարարներու Տեսանիւթ Փաստահաւաք Խոււմբը Չէ Տեսած

«Մարտի 1»-ի գործով նախկին Փաստահաւաք խումբի անդամ Անդրանիկ Քոչարեան յայտնած է որ, իրենց հասանելի եղած են բոլոր տեսանիւթերը եւ այնտեղ իրենք չենք տեսած կրակող ցուցարարներու մասին պատկերը, որ կը ներկայացնէր նախկին նախագահ Ռոպերթ Քոչարեանը:

«Ազատութեան» հետ գրոցի ընթացքին Անդրանիկ Քոչարեանը լսած է, «Տեսանիւթերի մասին, որ խօսում են, այդ ամբողջը մեզ հասանելի է եղել Փաստահաւաք խումբի գործունէութեան ընթացքում: Մեր նամակագրութեան արդիւնքում՝ Ազգային անվտանգութեան, ոստիկանութեան, դատախազութեան, քննութիւն իրականացնող մարմինի տուեալ նիւթերին ծանօթանալու, մենք ստացել ենք նիւթեր, մանրակրկիտ նայել ենք դրանք, եւ այնտեղ մենք չենք տեսել այն պատկերը, որ ներկայացնում էր նախկին նախագահ Ռոպերթ Քոչարեանը՝ կրակող ցուցարարներին վերաբերող նիւթ: Մենք էլ շատ կ'ուզէնայինք տես-

նել, յատկապէս Փաստահաւաք խումբի՝ իշխանութիւնը ներկայացնող փորձագէտները», - լսած է Քոչարեանը:

Ան նշած է՝ եթէ այդպիսի նիւթեր ըլլային, խումբը քննութիւնը կը սկսէր այդ նիւթերէն:

«Վստահաբար կարող ենք ասել, որ այդպիսի նիւթերը պարզապէս բացակայում են, իսկ այսօր, որ յայտարարում է նախկին դատախազ Գէորգ Կոստանեանը, դա ընդամենը լուծում է մէկ խնդիր՝ հեռացնել Ռոպերթ Քոչարեանին հնարաւորինս հարցաքննութեան կանչելու հնարաւորութիւնը», - պնդած է Անդրանիկ Քոչարեանը:

Եւրոպական դատարանի մէջ Մարտի 1-ի 9 գոհերու իրաւաչափողներու ներկայացուցիչ Վահէ Գրիգորեանը հակադարձելով իշխող Հանրապետականի պատգամաւոր Գէորգ Կոստանեանին պնդած է թէ, անցած 10 տարիներուն իշխանութիւնները մերժած են իրենց տրամադրել արիւնալի իրադարձութիւններուն վերաբերեալ տեսագրութիւնները:

## Նալպանտեան. «Ատրպէյճան Կը Մերժէ Կատարել Պայմանաւորուածութիւնը»

Երեւան այցելող Լիւքսեմպուրկի արտագին գործոց նախարարի հետ միատեղ ասուլիսի ժամանակ Հայաստանի արտաքին քաղաքականութեան ղեկավար Էտուարտ Նալպանտեան յայտարարած է, որ Ատրպէյճանը մինչեւ օրս կը հրաժարի կատարել անցնող Յունուարին կրակովի մէջ ԵԱՀԿ Մինսկի խումբի համաձայնագրահանրու միջնորդութեամբ նախատեսուած պայմանաւորուածութիւնը:

Էտուարտ Նալպանտեանը յորդորած է Պաքու վերադարձնել կառուցողական դաշտ.- «Վերջին այսպիսի հանդիպումը, որը կրակովում էր, երբ որ եռանախագահողների առջարկութեամբ մենք համաձայնութիւն ձեռք բերեցինք աւելացնել ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչի թիմի կարողութիւնները, եւ դրա մասին յայտարարեցին եռանախագահող երկրները եւ Հայաստանը, եւ մինչեւ հիմա Ատրպէյճանը հրաժարուած է ընդհանրապէս որեւէ

Շար.ը էջ 4

## ԱՄՆ Դատախազները Դադրեցուցած են Քրեական Հետապնդումը Երտողանի Թիկնապահներէն 11-ին Դէմ

Միացեալ Նահանգներու դաշնային դատախազները դադրեցուցած են քրեական հետապնդումը Թուրքիոյ նախագահի 15 թիկնապահներէն 11-ի նկատմամբ, որոնք նախապէս մեղադրուած էին Ուաշինգթոնի մէջ Թուրքիոյ ղեկավարի տան մօտ ցուցարարներուն ծեծի ենթարկելու համար:

Ամերիկացի դատախազները անցեալ Նոյեմբերին միջնորդութիւն ներկայացուցած են թիկնապահներէն 4-ի դէմ քրեական հետապնդումը դադրեցնելու վերաբերեալ, եւս 7-ի մեղադրանքներն ալ հանած են Փետրուարին նախկին պետական քարտուղար Ռեքս Թիլքերընի Անգարա կատարելիք այցի նախօրէին:

Թուրքիոյ նախագահը խստիւ դատապարտած ու լուրջ խայտառակութիւն որակած էր իր թիկնագործին մեղադրանք առաջադրելու՝ ամերիկեան դատարանի որոշումը:

Դիւանագիտական տազնապարտած էր անցած տարուան Մայիսին՝ Ռեճեփ Էրտողանի Ուաշինգթոնի միջնորդութիւնը նախկին պետական քարտուղար Ռեքս Թիլքերընի մեղադրանքները յարձակած էին այցի դէմ բողոքող ցուցարարներու՝ հայերու, քիւրտերու, յոյներու վրայ եւ դաժան ծեծի ենթարկած զանոնք:

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ինչպես ՀՀ-ն Օգտագործեց Կարևն Կարապետեանին

ՆԱՅԻՐԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Վարչապետի պաշտօնում կարգին կարապետեանի նշանակումը...

Կարապետեանին յաջողուել է որոշակի ցուցանիշներ արձանագրել:

ԱՎԾ-ն հրապարակել է սոցիալ-տնտեսական վիճակի մասին տուեալներ, ըստ որոնց՝ միայն տնտեսական ակտիվության ցուցանիշը...

Սրանք առաջին երկու ամսուկայ ցուցանիշներն են: Միաժամանակ կարապետեանի կառավարությունը կարողացել է արդիւնքներ գրանցել նաև նախորդ տարի. 2017թ., ըստ պաշտօնական տեղեկատվության, տնտեսական աճը եղել է աւելի քան 7 տոկոս, եւ աճ է եղել բոլոր ոլորտներում՝ արդիւնաբերություն, շինարարություն, ներքին ու արտաքին առևտրաշրջանառություն եւ այլն: Իսկ կարապետեանի կառավարությունը ջանք ու եռանդ չի խնայում թմբկահարելու, որ իրենք վերջին տարիներին համար աննախադէպ արդիւնք են գրանցել: Նշենք նաև, որ վարչապետի խօսնակ Արարատեանը նախօրէին «Ժողովուրդ» օրաթերթի հարցին, թէ՛ արդեօ՞ք կարապետեանը ցանկանում է շարունակել պաշտօնավարումը, պատասխանել էր. «Հաշուի առնելով այն ծրագրերը եւ մատնանշած բարեփոխումները, որ իրականաց-

նում է կառավարութիւնը, ինձ թւում է՝ ենթադրութիւնները Դուք կարող էք անել»:

Բայց արի ու տես, որ այս ցուցանիշներից յետոյ իշխող կուսակցութեան ներկայացուցիչները պնդում են՝ Սերժ Սարգսեանն անփոխարինելի է, եւ նրան են տեսնում ապագայ վարչապետի՝ երկրի փաստացի ղեկավարի պաշտօնում: Աժ ՀՀ կառավարութեան պատգամաւոր, տնտեսական հարցերով մշտական յանձնաժողովի նախագահ Խոսրով Յարութիւնեանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրոյցում ԱՎԾ-ի հրապարակած տուեալները կապեց թէ՛ կառավարութեան աշխատանքի, թէ՛ արտաքին ազդակների հետ: Սակայն նա եւս ընդգծեց, թէ՛ այս ամենի հետեւում ամէն ղէպքում Սերժ Սարգսեանի իշխանութեան ու ՀՀ-ի ծրագիրն է կանգնած: «Այս ամէնի վրայ իր դրական ազդեցութիւնը երկու գործօն է թողնում: Առաջինը՝ ԵՏՄ-ն է, որի շուկան գնալով իրեն զգացնել է տալիս: Իսկ երկրորդը՝ ես կարծում եմ՝ էական նշանակություն ունի ԵՄ-ի հետ մեր յարաբերությունների շեղումը», - նշեց նա: Դիտարկմանը՝ մէջբերուած տուեալները կարող ենք դիտարկել կարգին կարապետեանի կառավարութեան յաջողութիւն, թէ՛ սա իշխանութիւնների աշխատանքի արդիւնքն է, Յարութիւնեանը նշեց. «Ես կարգին կարապետեանի եւ իշխանութիւնների յաջողութիւնները չէի տարանջատի: Կարգին կարապետեանն իր քաղաքականութիւնն իրականացնում է այն օրէնսդրական նախաձեռնութիւններով, որոնք անցնում են Ազգային ժողովով: Կարապետեանն իրականացնում է ՀՀ-ի նախընտ-

րական ծրագրի պահանջները: Ես չեմ կարող պնդել, թէ՛ այդպիսի յաջողութիւն կը լինէր նաև այլ վարչապետի ղէպքում, սակայն պէտք է համաձայնենք, որ կայ կառավարութեան գործունէութեան ծրագիր, որը ՀՀ-ի պատասխանատուութիւնն է որպէս իշխող ուժ:

Ստացւում է՝ ՀՀ-ի համար ձայներ բերելու հարցում կարգին կարապետեանն անփոխարինելի էր, նրա «Ժրլետն» օգտագործեցին, սակայն հիմա միեւնոյն է՝ Սերժ Սարգսեանն է շարունակելու իշխանութեան ղեկին մնալ: Այն, որ նոր Սահմանադրութեան պարագայում Սերժ Սարգսեանը զբաղեցնելու է վարչապետի պաշտօնը, պարզ էր ի սկզբանէ. սա վաղուց ծրագրուած սցենար էր, եւ ընդհանրապէս սահմանադրական փոփոխութիւնների ողջ գործընթացը կազմակերպուեց, ու կեանքի գնով իշխանութիւններն այն իրականութիւն դարձրին հենց Սերժ Սարգսեանի անձնական իշխանութեան վերադարձութեան համար: Ու միայն ծայրաստիճան միամիտներն էին համոզուած, որ կարող է ինչ-որ փոփոխութիւն տեղի ունենալ, եւ որ Ս. Սարգսեանն իշխանութիւնը կը փոխանցի Մոսկուայից եկած կարապետեանին:

Յ.Գ. Օրեր առաջ խորհրդարանում կառավարութեան հետ հարցուպատասխանի ժամանակ կարգին կարապետեանը խուսափեց պատասխանել իր յետագայ պաշտօնավարման շուրջ հարցին: Մասնաւորապէս «Ելք»-ի պատգամաւորներից էր մոն Մարութեանը չիշեցրեց, որ վարչապետը նշել էր, թէ՛ պատրաստ է յետագայում էլ պաշտօնավարել, ինչին ի պատասխան՝ կարապետեանը չեշտեց. «Հարց էք տուել՝ պատրաստ եմ, թէ՛ չէ ասել եմ՝ պատրաստ եմ, քննարկումը դեռ չկայ»:

«ԺՈՂՈՎՈՒՐԴ»

Գերադասում են Բացայայտ Ցինիզմը

ՍԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ

Քաղաքական ցինիզմը միշտ էլ բնորոշ է եղել Հայաստանի իշխանութիւններին, բայց որպէս կանոն՝ իշխանութիւնները փորձել են գոնէ արտաքին պատշաճութեան կանոնները պահպանել եւ ամեն ինչ ներկայացնել այնպէս, թէ՛ իբր ինչ անում են՝ պետութեան ու ժողովրդի համար են անում: Հիմա նոյնիսկ դա չեն անում: Ընտրութիւնների ինստիտուտը վերջնականապէս ոչնչացուած է, եւ արտաքին պատշաճութեան պահպանման «թրենդը» անիմաստ է դառնում: Արտաքին պատշաճութեան պահպանումը բարձրաշխարհիկ պարահանդէսներում է պարտադիր, իսկ հասարակաց տներում դրա կարիքը չկայ՝ այնտեղ բոլոր պայմանականութիւններն աւելորդ են:

սոցիալական ծանր վիճակը կամ ցանկացած այլ բացատրութիւն որեւէ նշանակութիւն չունի:

Հայաստանի ղէպքում պրոբլեմն «ընդամենը» այն է, որ մարդկանց միայն մի մասն է վերցրել 10 հազար դրամը, իսկ ՀՀ-ն անխտիր բոլորին է «ինչ ուզում» անում: Բայց ՀՀ-ն դրա բացատրութիւնն էլ ունի՝ ժողովրդավարութիւն է, փոքրամասնութիւնը պիտի չդիմադրի եւ համբերատար սպասի մինչեւ յաջող ընտրութիւնները:

Ի դէպ՝ Շարմազանովը նոյնպիսի ցինիզմով նաև խորհրդարանական ընդդիմութեան «պորտն է տեղը դնում»: Յայտարարում է, թէ՛ «այդ ուժերից որեւէ մէկը կասկածի տակ չի դրել ՀՀ-ի յաղթանակն ընտրութիւններում, շատ մեծ հաճույքով վերցրել են մանդատներն ու աշխատում են»: Ուզում է ասել՝ պէտք է փորձել միաժամանակ եւ՝ հաճույք ստանալ, եւ՝ կոչ մնալ: Ինչ-որ իմաստով, իհարկէ, ճիշտ է ասում. չի կարելի սուտուփուս հետեւել, թէ՛ ինչպէս է ակնյայտ կեղծիքներով ընդունւում այնպիսի Սահմանադրութիւն, որի համաձայն խորհրդարանն է ընտրելու պետութեան առաջին ղէպքին, յետոյ ընդունել այդ խորհրդարանի լեգիտիմութիւնը, ու վերջում բողոքել, որ խորհրդարանական մեծամասնութիւնն ուժ ուզում՝ վարչապետ է կարգում: Բայց միւս կողմից էլ՝

ՀՀ-ն այնպէս է «հաճույքով աշխատելն» ընդդիմութեան երեսով տալիս, կարծես այդ մանդատները ՀՀ-ն է տուել, կամ ընդդիմադիր պատգամաւորների աշխատավարձերն ու արտասահմանեան գործուղումների գումարները Սերժ Սարգսեանի անձնական գրպանից են վճարուում:

Մի խօսքով՝ ՀՀ-ն է դուրազ Շարմազանովի շուրթերով բաւականին ցինիզմ ձեւով յայտարարում է, որ Սերժ Սարգսեանի վարչապետութեան ղէպ հանրահաւաքային պայքարը «կեղծ օրակարգ» է եւ «նոստենս»: Բայց բերուած փաստարկները վերաբերում են միայն խորհրդարանական ընդդիմութեանը, մինչդեռ Հայաստանում կան եւ՝ արտախորհրդարանական ուժեր, եւ՝ հարիւր հազարաւոր քաղաքացիներ, ովքեր խորհրդարանական ընտրութիւններին ընդհանրապէս չեն մասնակցել, եւ՝ տասնեակ հազարաւոր քաղաքացիներ, ովքեր հաւատացել են, որ Սերժ Սարգսեանն այլեւս պետութեան ղեկավարի պաշտօնը չի ստանձնելու, եւ «հանգիստ խղճով» ձայն են տուել ՀՀ-ին (փողի դիմաց, թէ՛ այլ պատճառով՝ էական չէ): Այսինքն՝ պոտենցիալը կայ, համընդհանուր դժգոհութիւնը կայ, մնում է, որ գտնուեն «կեղծ օրակարգի» իրական դարձնելու մեխանիզմները:

«ՁՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

Գերադասում են Բացայայտ Ցինիզմը

Advertisement for MASSIS Weekly, featuring the logo and contact information for the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA.

### ՎԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

## «Սա Վճռական Ծակատամարտն է: Նախորդը Ծուղակ է Եղել».- Նիկոլ Փաշինեան

Աժ «ԵԼՔ» խմբակցութեան ղեկավար Նիկոլ Փաշինեանը խորհրդարանի մէջ լրագրողներու հետ զրոյցի ընթացքին ըսած է, որ դեռեւս 2015 թուականին ինք նշած էր, որ սահմանադրական փոփոխութիւնները կ'ըլլան իշխանութեան վերարտադրութեան համար:

Ան անդրադարձաւ հարցին, թէ ինչո՞ւ սահմանադրական փոփոխութիւններու ժամանակ իրենք չէին պայքարիր խնդիրի դէմ:

«Եթէ ենթադրենք, որ 2015 թուականի սահմանադրական հանրաքուէով պարտուեմ էր Սերժ Սարգսեանը, դա չէր նշանակում, որ ինքը չէր վերարտադրուելու: Եւ հիմնական թէզը իմ յօդուածի ու մեր դիրքորոշման, հետեւեալն էր, որ մենք վերարտադրութեան դէմ պէտք է պայքարենք հենց բուն վերարտադրութեան գործընթացի ժամանակ:

Փաշինեան աւելցուցած է, որ ինչ-որ առումով սա վճռական ճակատամարտն է: Նախորդը ծուղակ եղած է, եւ այն ուժերը, որոնք մտած են այդ ծուղակի մէջ, իրենք կը յայտարարեն, որ այսօր ի վիճակի չեն կազմակերպել պայքար:



«ԵԼ» խմբակցութեան ղեկավար Նիկոլ Փաշինեան

Փաշինեանը անդրադարձաւ Սերժ Սարգսեանի վարչապետութեան դէմ բողոքներուն՝ նշելով, որ ճշգրիտ իրենց համար սկզբունքային է քաղաքական պայքարի խաղող ընթացքը:

Ինչ կը վերաբերի հարցին, թէ հասարակութիւնը ոտքի կը կանգնի, ան պատասխանեց, որ այդ հարց մըն է, որու պատասխանը իրենք կը փորձեն գտնել գործողութեան մէջ:

## ՀՀԿ-ԷՆ ՆԵՐՍ ՎԱՐՉԱՎԵՏԻ ՀԱՐԳՈՎ ՊԱՇՏՈՆԱՎԵՍ ԲՆՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱԳՈՒՑԱԾ ՉԵՆ

Հայաստանի ապագայ վարչապետի հարցը «տարբեր ֆորմատներով (ձեւերով) քննարկուեմ է եւ քննարկման փուլում է»: Այս մասին յայտարարեց իշխող Հանրապետական կուսակցութեան (ՀՀԿ) խօսնակ, Ազգային ժողովի փոխնախագահ Էտուարտ Շարմազանովը՝ վկայակոչելով Հայաստանի նախագահ եւ ՀՀԿ առաջնորդ Սերժ Սարգսեանի օրերս տուած հարցազրոյցը:

«Եւ մենք պէտք է իրականացնենք որոշում, որ բացառապէս բխում է այսօրուայ իրողութիւններից, այսօրուայ մարտահրաւէրներից, եւ Հայաստանի Հանրապետական կուսակցութիւնը կ'ընդունի այնպիսի որոշում, որը բացառապէս կը սպասարկի Հայաստանի Հանրապետութեան պետական ու ազգային շահը», - ըսած է Շարմազանովը:

«Մինչ այսօր, Հայաստանի հանրապետական կուսակցութիւնը, ինչպէս իր հարցազրոյցում իրաւացիօրէն նշեց կուսակցութեան նախագահ պարոն Սարգսեանը, տարրական քննարկումներ չի իրականացրել: Ի՞նչ են տարրական քննարկումները. այսինքն՝ մենք պաշ-

տօնապէս ո՛չ գործադիր մարմինում, ո՛չ խորհուրդի նիստում դեռեւս այս խնդիրին չենք անդրադարձել»:

«Բայց ես կարող եմ նշել, որ, այո, առանձին-առանձին մենք ե՛ւ մամուլի միջոցներով, ե՛ւ առանձին կուսակցական գործընկերներով մեր կարծիքը արտայայտել ենք», - շարունակած է Շարմազանովը: - «Ես իմ կարծիքը առնուազն վերջին մէկ տարուայ ընթացքում մշտապէս բաց արտայայտել եմ, եւ իմ կարծիքը հետեւեալն է՝ Հայաստանի հանրապետական կուսակցութիւնը, հաշուի առնելով արտաքին եւ ներքին մարտահրաւէրները, Սահմանադրութեամբ վարչապետին տրուած լիազօրութիւնների շրջանակներում աւելի պատասխանատու, աւելի պատրաստուած, աւելի փորձառու, աւելի իմաստուն, մարտահրաւէրներին աւելի ճկուն դիմակայելու գործիչ, քան՝ գործող նախագահ Սերժ Սարգսեանը, չունի: Բայց սա բացառապէս իմ ենթակայական կարծիքն է, որը կրտում են նաեւ շատ ու շատ հանրապետական մեր գործընկերներ»:

## Կարապետեանը Չէ Հրաժարած Վարչապետի Պաշտօնը Ստանձնելու Պատրաստակամութենէն

Կարէն Կարապետեանը չի հրաժարիր իր խօսքերէն, թէ պատրաստ է ապրիլին նորէն ստանձնելու վարչապետի պաշտօնը՝ չնայած Սերժ Սարգսեանի յայտարարութեան, որ դէմ չէ Հանրապետականի կողմէն առաջադրուելի վարչապետի թեկնածու:

Փոխարէնը Կարապետեանը չ'ըսէր, թէ պատրաստ է արդեօք դառնալ առաջին փոխվարչապետ:

Խորհրդարանի մէջ Կառավարութեան հետ հարցուպատասխանի ժամանակ ընդդիմադիր պատգամաւոր Էտուարտ Շարմազանը Կարէն Կարապետեանին յիշեցուցած է թէ իր հարցազրոյցներէն մէկում ընթացքին յայտնած այն միտքը, որ վարչապետի հարցով անորոշութիւնը կ'ազդէ

նաեւ պիզնեսի առեւտուրի վրայ:

«Ես ընդունում եմ փաստը, որ մարդիկ կան, պիզնես կայ, որը դրա վրայ արձագանքում է: Ես սակայն եմ, որ դա այդպէս է: Եւ լիքը մարդ կայ, որ դրան արձագանքում է: Եւ մեր խնդիրն է, որ պէտք է մենք այնպիսի համակարգ ստեղծենք, որպէսզի անձին կախուած պիզնեսը շատ արձագանքը, սպասումները կամ համարձակութիւնը պիզնես անել թէ չանել, պակասի: Բայց մենք պէտք է հաստատենք, որ մարդիկ կան, որոնք դրան արձագանքում են»:

Աւելի վաղ Կարէն Կարապետեանը քանի մը անգամ շեշտած է, որ դէմ չէ Ապրիլին եւս գլխաւորելու Կառավարութիւնը:

## Սերժ Սարգսեանը Բոլոր Ոլորտներու Մէջ Ձախողած է, Չի Կարելի Հանդուրժել. «Սերժիր Սերժին» Խումբի Անդամներու Կարծիքը



«Սերժիր Սերժին» նախաձեռնութեան անդամները ասուլիսի ընթացքին

«Սերժիր Սերժին» նախաձեռնութեան անդամները «Մետախ կեդրոն»-ի մէջ քննարկած են Սերժ Սարգսեանի վերարտադրութեան դէմ պայքարի յետագայ քայլերն ու նպատակները:

«Սերժիր Սերժին» նախաձեռնութեան անդամ Դաւիթ Յովհաննիսեանը յայտարարած է, որ Սերժ Սարգսեանը իր ղեկավարման 10 տարիներուն միայն ձախողած է եւ արձանագրած աղէտալի ցուցանիշներ բոլոր բնագաւառներում մէջ:

«Սերժիր Սերժին» նախաձեռնութեան անդամ Դաւիթ Սա-

նասարեանն ալ շեշտած է, որ իրենց կատարած հաւաքով աւելի շատ փորձեցած են շօշափել մարդոց տրամադրուածութիւնը, քայլերու յաջորդականութիւնը: Վերջինս ընդգծած է, որ պէտք է աշխատիլ, որպէսզի ՀՀԿ-ն չկրնայ վարչապետ նշանակել:

«Սերժիր Սերժին» նախաձեռնութեան անդամ Դաւիթ Պետրոսեանն ալ շեշտած է, որ Հանրապետական կուսակցութեան մէջ չկայ ներքին ժողովրդավարութիւն, ակնյայտ է, որ մէկ մարդու վրայ հիմնուած է կուսակցութիւնը:

## «ԵԼՔի» Պատգամաւորը Խօսած Է Դաշինքէն Ներս Անհամաձայնութիւններու Մասին:

Աժ «ԵԼՔ» խմբակցութեան պատգամաւոր, Լուսաւոր Հայաստան կուսակցութեան ներկայացուցիչ Գեորգ Գորգիսեանը Աժ ճեպարկներու ժամանակ խօսած է «ԵԼՔ» դաշինքէն ներս եղած անհամաձայնութիւններու մասին:

Դաշինքի երեք ուժերը՝ Քաղաքացիական Պայմանագիր, Լուսաւոր Հայաստան եւ Հանրապետութիւն, համաձայնութեան չեն յանգած Սերժ Սարգսեանի վարչապետութեան դէմ պայքարի ձեւերում հարցին մէջ: Քաղաքացիական Պայմանագիրը՝ Նիկոլ Փաշինեանի ղեկավարութեամբ փողոցային պայքարի ճանապարհային քարտէզներ կայացուցած է, որուն պիտի չմիանան Լուսաւոր Հայաստանն ու Հանրապետութիւնը:

Գեորգ Գորգիսեանը ըսած է, որ Լուսաւոր Հայաստանն ու Հան-

րապետութիւնը ցանկացած են սեփական վարչապետի թեկնածու առաջադրելու ծրագիր առաջ տանիլ, բայց Քաղաքացիական պայմանագիրի դիրքորոշումը այլ է:

Ըստ Գորգիսեանի՝ երբ մարդիկ յանպատրաստից փորձած են գրաւել իշխանութիւնը, այդ ոչ մէկ լաւ բանի չի հասցներ: Ըստ անոր՝ իրենք նման մտավախութիւններ ունէին նաեւ Քաղաքացիական Պայմանագիրի ճանապարհային քարտէզի վերաբերեալ, բայց այն փոփոխուած է, թէ ինչպէս են այդ մտահոգութիւնները փարատուած, «ԵԼՔի» միւս ուժերը դեռ չեն գիտեր: Ըստ անոր՝ ՀՀԿ-ն գործող լուրջ համակարգ է, անոր դէմ պէտք է ունենալ լուրջ հակահամակարգ, հակառակ պարագային յաջողութիւն չ'ըլլար:

## Հրայր Թովմասեանը Ընտրուեցաւ Սահմանադրական Դատարանի Նախագահ

Խորհրդարանը փակ գաղտնի քուէարկութեամբ ձայներու 64 կողմ, 27 դէմ յարաբերակցութեամբ Սահմանադրական դատարանի նախագահ ընտրեց Հրայր Թովմասեանը: Ժամանակաւոր հաշուիչ յանձնաժողովի նախագահ Գագիկ Մելքեանը նշեց, որ 105 պատգամաւորներէն քուէարկութեան մասնակցած է 94-ը:

«Քուէատուփում առկայ էր 93 քուէարկութիւն, որոնցից անվաւեր են ձանաչուել 2-ը», - ըսած է Մելքեանը:

Թովմասեանը շնորհակալութիւն յայտնեց վստահութեան, իսկ

Ազգային ժողովի նախագահ Արա Պապլոյեանին՝ նաեւ իր թեկնածութիւնը այդ պաշտօնի մէջ առաջադրելու համար:

«Ինչպէս նշեցիք, թէ՛ լաւ Սահմանադրական դատարանի նախագահ, թէ՛ Սահմանադրական դատարանի լաւ նախագահ, խոստանում եմ, որ երկուսն էլ կը լինեն», - ըսած է Թովմասեանը:

Յիշեցնենք, Գագիկ Յարութիւնեանը Հրաժարական տուած է Սահմանադրական դատարանի նախագահի պաշտօնէն, քանի որ այս ամսուան սկիզբէն կը լիսաւորէ Բարձրագոյն դատական խորհուրդը:

# ԼՈՒՐԵՐ

## Երկար Բանակցութիւններէ Ետք Թուրքիոյ Եւ Եւրոպական Միութեան Միջեւ Ոչ մէկ Համաձայնութիւն



Թուրքիոյ նախագահի եւ Եւրոպական Միութեան ղեկավարներու հանդիպումը Վարնայի մէջ

Թուրքիոյ նախագահ Էրտողանի հետ դռնփակ հանդիպումէն վերջ Եւրոպայի խորհուրդի նախագահ Տոնալտ Տուսկը հրապարակաւ յայտարարած է, որ տարածայնութիւնները բաւական շատ են՝ Թուրքիոյ մէջ մարդու իրաւունքներու պաշտպանութեան մինչեւ Թուրքիական բանակի ներխուժումը Սուրիա:

Եւրամիութեան մէջ այժմ նախագահող երկրի՝ Պոլսկարիոյ մէջ իրականացուող խորհրդատուական առաջ Թուրքիոյ նախագահը պնդած էր, որ Պրիւսեիլն պիտի պահանջէ աւարտին հասցնել վիզային ազատականացումն ու աշխուժացնել անդամակցութեան շուրջ բանակցութիւնները:

«Եւրամիութիւնը իր պարտականութիւնները կատարելու ժամանակ ի ցոյց չի դնել նոյն անկեղծութիւնն ու չէզոքութիւնը, ինչպէս որ անոնք կը տեսնեն Թուրքիական կողմէն», - Անգարայի մէջ յայտարարած էր Էրտողանը ընդգծելով, թէ «Թուրքիան արժանի է դառնալ Եւրամիութեան լիիրաւ ու յարգարժան անդամ»:

Տոնալտ Տուսկի արձագանգը այս պահանջներուն միանշանակ էր. «Մեր դիրքորոշումը յստակ է՝ Եւրամիութեան եւ Թուրքիոյ միջեւ յարաբերութիւններու մէջ, ինչպէս նաեւ անդամակցութեան շուրջ բանակցութիւններու մէջ բարելաւում կ'ըլլայ միայն այն ժամանակ, երբ Թուրքիան առաջընթաց արձանագրէ մեզի մտահոգող հարցերու մէջ»:

Ի տարբերութիւն եւրոպացի դիւանագէտներու, Թուրքիոյ առաջնորդը կը փորձէր առաւել

լաւատեսական երանգներ հաղորդել:

«Յոյսով եմ, որ մենք անցեալին ձգած ենք դժուարին յարաբերութիւններու փուլը եւ արդէն առաջին քայլը առած ենք վստահութիւնը ամրապնդելու ուղղութեամբ», - յայտարարած է Ռեճեփ Էրտողանը՝ պնդելով, թէ Թուրքիան ժողովրդավարական երկիր է, որ կը պաշտպանէ մարդու իրաւունքներ ու հիմնարար ազատութիւնները. «Եւրամիութիւնը մեծ սխալ կ'ընէ, եթէ անտեսէ Թուրքիան ընդարձակման ընթացքին: Անգարան անդամակցութեան շուրջ բանակցութիւններ կը վարէ 1963 թուականէն ի վեր, հիմա 2018-ն է, բայց մենք դեռ կը մնանք թեկնածու երկիր»:

Անդրադառնալով վիճարկող միւս հարցին՝ Սուրիոյ հիւսիսը քիւրտ զինեալներու դէմ սկսած յարձակման, Թուրքիոյ նախագահը կրկին պնդած է՝ Անգարան կը պայքարի ահաբեկիչներու դէմ եւ այդ պայքարը դադարեցնելու մտադրութիւն չունի:

Ամփոփելով բանակցութիւնները՝ «Ֆրանսափրեւը» փաստած է՝ ի տարբերութիւն Եւրամիութեան առաջնորդներու հետ ունեցած այս կարճատեւ հանդիպման, Թուրքիոյ նախագահը յաջող չաբաթ երկուօրով կը հիւրընկալէ Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութինը, որու հետ Արեւմուտքի յարաբերութիւնները կը սրուին օր-օրի:

ՆԱԹՕ-ի անդամ Անգարան արդէն յայտարարած է, որ մտադիր չէ արեւմտեան դաշնակիցներու պէս արտաքսել ռուս դիւանագէտները:

### Ատրպէյճան Կը Մերժէ Կատարել

Շարունակուած էջ 1-էն

յողում կատարել այդ ձեռք բերուած պայմանաւորութեանը եւ յարգել, իրականացնել այդ պայմանաւորութեանը: Ոչ միայն Կրակովում, դրանից առաջ բազմաթիւ անգամ է դա եղել»:

Յունուարի վերջաւորութեան կատարած հարցազրոյցին Նալպանտեանը մանրամասնած էր, որ, ըստ պայմանաւորութեան, ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անճէյ Կասպշիկի խումբին պէտք է միանաւ եօթ ռոգի եւ անոնք հետեւին Լեռնային Ղարաբաղի մէջ հրադադարի պահպանման:

Լիւքսեմպուրկի արտաքին գործերու եւ եւրոպական հարցերու նախարար Ժան Ասելպոռնը հանդէս եկաւ ուշադրաւ յայտարարութեամբ՝ նշելով, թէ Եւրամիութեան հետ վիզայներու ազատականացման շուրջ պայմանաւորութեանը առումով Հայաստանը ճիշդ ձեւով կ'ընթանայ, եւ եթէ շարունակէ այսպէս «օրը կու գայ եւ վիզայները կ'ազատականացուին»:

Ասելպոռնը Երեւանի մէջ Լիւքսեմպուրկի պատուոյ հիւպատոսի գրասենեակի բացման մասնակցած եւ յայտարարած է, որ Հայաստանը շատ կարեւոր երկիր է Եւրամիութեան համար:

## Զատուլին. «Հայաստանի Եւրամիութեան Զանկացած Յարձակում Ռուսաստանը Պիտի Դիտարկել Որպէս Սպառնալիք Իր Եւրամիութեան»

«Ռուսաստանը հետեւութիւններ ըրած է 2016-ի ապրիլեան պատերազմէն, այդ պատճառով ալ ասկէ վերջ Հայաստանին տրամադրուած են նորագոյն զինատեսակներ», - խորհրդարանի մէջ կայացած ասուլիսին յայտարարեց Պետական Տուժարի ԱՊՀ գործերով ու եւրասիական ամբողջացման կոմիտէի նախագահի առաջին տեղակալ Կոնստանդին Զատուլինը:

«Մենք կը հասկանանք, որ 2016-ի լարումէն յետոյ, որ նախաձեռնած էր կողմերէն մէկը, հայաստանեան հանրային կարծիքի մէջ Ռուսաստանին ուղղուած լուրջ դժգոհութիւններ կային, օրինակ, Ատրպէյճանին Ռուսաստանի կողմէն գէնքի մատակարարման առումով: Մենք շատ կ'ափսոսանք, որ Ատրպէյճանի մէջ այլ կիրառութիւն չգտան, քան շփման գիծի վրայ խախտելու հրադադարի մասին համաձայնութիւնը, որ նաեւ մեր ջանքերու շնորհիւ գոյութիւն ունէր 1994 թուականէն: Մենք ըրած ենք հետեւութիւններ՝ կապուած տարածաշրջանի մէջ զինատեսակներու հաւասարակշռութեան խախտման հետ, եւ տրամադրած ենք Հայաստանին ամենաժամանակակից պաշտպանական միջոցներ, որ հնարաւորութիւն ունեցած էք տեսնելու Հանրապետութեան օրուայի առթիւ կազմակերպուած զօրահանդէսի ժամանակ», - ըսած է Զատուլինը:

Հայաստանի դաշնակից Ռուսաստանի խորհրդարանի պատգա-



Ռուսաստանի Պետական Տուժարի պատգամաւոր Կոնստանդին Զատուլին

մաւորի պնդմամբ՝ իրենք Ատրպէյճանին ամենեւին ալ նորագոյն տեխնիկա չեն մատակարարած. - «Իսկապէս զինամթերքի որոշակի մատակարարում եղած է, բայց անոնք վճարուած ու նախատեսուած էին նախքան ստորագրուած պայմանագիրներով:

Պետական Տուժարի մէջ իշխող «Միասնական Ռուսաստան» կուսակցութեան պատգամաւոր Զատուլինը Երեւանի մէջ հաստատեց, որ Ռուսաստանը պիտի կատարէ անվտանգութեան ու պաշտպանութեան ոլորտի մէջ Հայաստանի նկատմամբ իր պարտականութիւնները. - «Հայաստանի նկատմամբ ցանկացած յարձակում կամ ուզումական վտանգ Ռուսաստանը պիտի դիտարկէ որպէս սպառնալիք իր նկատմամբ»:

## Հայ Պատգամաւոր Սելինա Տողանը Կ. Պոլսոյ Մէջ «Եւա» Ֆիլմը Արգիլելու Հարցը Բարձրացուցած է Խորհրդարանէն Ներս

Թուրքիոյ ընդդիմադիր «Ժողովրդահանրապետական կուսակցութեան» (CHP-ժՀԿ) ընտրուած հայ պատգամաւոր Սելինա Տողանը խորհրդարանի մէջ բարձրացուցած է պարսկահայ բեմադրիչ Անահիտ Ապատի «Եւա» ֆիլմի ցուցադրութիւնը արգիլելու հարցը:

«Էրմենիհայեր»-ի փոխանցմամբ, Տողանը խորհրդարանի դեկավարութեան ներկայացուցած է Թուրքիոյ ներքին գործերու նախարար Սուլէյման Սոյլուին ուղղուած գրաւոր հարցի մէջ՝ հետաքրքրուելով ֆիլմի ցուցադրումը արգիլելու պատճառներու մասին:

Հայ պատգամաւորը շեշտած է, որ «Եւա» ֆիլմը պէտք է ցուցադրուի Կ. Պոլսոյ մէջ իրականացուող «Ֆիլմմոր» միջազգային շարժանկարի փառատօնի շրջանակներու մէջ, բայց ցուցադրութիւնը արգիլուած է մէկ այլ երկրի պահանջով:

Տողանը Թուրքիոյ նախարարին ուղղած է հետեւեալ հարցադրումները. «Ֆիլմը արդեօք ուսումնասիրուած է Ձեր նախարարութեան կողմէն: Եթէ ուսումնասիրուած է, ֆիլմի ո՞ր դրուագներու մէջ առկայ են արգելքի համար հիմք հանդիսացող տարրեր: Եթէ այդպիսի հիմքեր կան, անոնք գործող օրենսդրութեան ո՞ր յօդուածները կը խախտեն»:

Տողանը արեւելցուցած է նաեւ, որ շարժանկարի փառատօնի թեմային համապատասխանող եւ կնոջ պարած անձնական ողբերգութեանէն բացի այլ բան չպարունակող ֆիլմի ցուցադրութեան արգելքը կա-



Թուրքիոյ Խորհրդարանի հայ պատգամաւոր Սելինա Տողան

րելի է դիտել որպէս պատասխան այն հարցին, թէ ինչու Թուրքիան մինչեւ հիմա գիտութեան, արուեստի ու մարզանքի բնագաւառներու մէջ ետ մնացած է միջազգային շափանիչներէն:

Ֆիլմը կը պատմէ կնոջ մը մասին, որ կը փախչի իրանի մէջ գտնուող իր նախկին ամուսինէն եւ ապաստան կը գտնէ Արցախի դիւղերէն մէկուն մէջ:

Ֆիլմի ցուցադրութիւնը նախատեսուած էր Մարտ 17-ին, սակայն ցուցադրութեան ժամեր առաջ Կ. Պոլսոյ նահանգապետարանը յատուկ գրութեամբ շարժանկարի փառատօնի կազմակերպիչներուն տեղեկացուցած է ներքին գործերու նախարարութեան արգելքի մասին:

Շարժանկարի փառատօնի կազմակերպիչներէն Մելքե Օզմանը յայտարարած էր, որ ֆիլմը արգիլուած է Ատրպէյճանի ղեկավարութեան միջամտութեան հետեւանքով:

## Արեւմուտք-Ռուսաստան Յարաբերութիւններու Սրումը «Չի Խոչընդոտեր» ԵՄ- Յայաստան Համաձայնագիրի Վաւերացումը

Կառավարութեան նիստէն յետոյ փոխ-արտգործնախարար Շաւարշ Քոչարեանը լրագրողներու հետ զրոյցին նշեց, որ Արեւմտեան երկիրներու հետ Ռուսաստանի յարաբերութիւններու մէջ ի յայտ եկած լարուածութիւնը ազդեցութիւն չունենար Արեւմուտքի հետ Հայաստանի յարաբերութիւններու վրայ եւ խոչընդոտներ չի յարուցեր Եւրամիութեան հետ անցեալ տարի նոյեմբերին կնքուած Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագիրի վաւերացման գործընթացին մէջ:

Կրեմլի ու արեւմտեան առաջատար երկիրներու միջեւ նոր լարուածութեան պատճառ հանդիսացաւ Մարտ 4-ին բրիտանական Սոլսպերի քաղաքի մէջ տեղի ունեցած դէպքը, երբ ծանր թունաւորում ստացած էին Ռուսաստանի ռազմական հետախուզութեան պաշտօնաթող զննապետ, յետագային Լոնտոնի օգտին լրտեսութեան համար դատապարտուած Սերգէյ Սկրիպալը եւ անոր դուստր Յուլիան: Պաշտօնական Լոնտոնը մեղադրեց Ռուսաստանի իշխանութիւնները: Միացեալ Նահանգներու, Մեծ Բրիտանիոյ, Գերմանիոյ եւ Ֆրանսայի ղեկավարները հանդէս եկան համատեղ յայտարարութեամբ՝ խստօրէն դատապարտելով կատարուածը, այն բնորոշելով, որպէս չարձակում Մեծ Բրիտանիոյ ինքնիշխանութեան դէմ եւ սպառնալիք իրենց անվտանգութեան:

Շաւարշ Քոչարեանը գրեթէ անհաւանական համարեց, որ Եւրամիութեան անդամ երկրներու մակարդակով նոյնպէս փորձ կատարուի խոչընդոտելու Պրիւսիայի հետ Հայաստանի ստորագրած հիմնարար համաձայնագիրի վաւերացումը:

Կառավարութիւնը համաձայնութիւն ներկայացուց Հայաստանի ու Եւրամիութեան եւ հիւլէական ուժի եւրոպական համայնքի ու անոնց անդամ պետութիւններու միջեւ Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագիրը վաւերացնելու մասին օրէնքի նախագիծին: 16 մարտին Հայաստանի Սահմանադրական դատարանը որոշած էր, որ համաձայնագիրը կը համապատասխանի երկրի Սահմանադրութեան, եւ այժմ հերթը Ազգային ժողովինն է վաւերացնելու փաստաթուղթը:

Երեւանի ու Պրիւսիայի միջեւ ստորագրուած Համապարփակ եւ ընդլայնուած գործընկերութեան համաձայնագիրը Եւրամիութեան անդամ 28 երկրներէն առաջին վաւերացուցած է միայն Էստոնիան:

Պաշտպանութեան նախկին փոխնախարար Անդրանիկ Քոչարեանի կարծիքով, Ռուսաստան - Արեւմուտք վերստին սրուած յարաբերութիւնները կրնան վտանգաւոր ըլլալ Հայաստանի համարգ- «Մենք պէտք է ուշադիր լինենք, որովհետեւ այդ հակամարտութիւնը Ռուսաստանի եւ Արեւմուտքի խորանայով ձգտում ունի: Որովհետեւ խորանայով՝ այս ամէնը տեղափոխելու է նաեւ Սիրիա, այլ հակամարտութեան դրսեւորումներ են նորից ի յայտ գալու: Մենք մտել ենք արդէն գերտնտեսութիւններու հետախուզական ծառայութիւնների հակամարտութեան շրջան, իսկ այնտեղ կարող է նաեւ ծրագրաւորումներ լինեն, որպէսզի տուեալ խնդիրը լուծեն՝ լուծեն նաեւ այլ հակամարտութիւններ արթնացնելու խնդիրներ»:

## Թուրքիան Բանտարկեալներու Թիւով Եւրամիութեան Երկիրներու Մէջ Առաջին Տեղը կը Գրակէ

Թուրքիան բանտարկեալներու թիւով Եւրամիութեան 43 երկիրներու շարքին առաջին տեղը կը գրաւէ: Այս մասին յայտնի դարձած է Եւրոպական խորհուրդի կողմէն այսօր հրատարակուած քրէական վիճակագրութեան 2016թ. տարեկան հաշուետուութեանէն:

Զեկույցի համաձայն՝ 2016թ. թուրքական բանտերու մէջ անազատութեան մէջ գտնուած է 192.627 բանտարկեալ: Այս ցուցանիշով երկրորդ տեղը Անգլիան է, ուր կայ 94.000 բանտարկեալ:

Ընդ որում՝ Թուրքիոյ մէջ ազատագրուածներու թիւը 2006-2016թթ. ընթացքին աւելցած է 161 տոկոսով, որ մրցանշային է ողջ Եւրամիութեան տարածքին:

Իսկ 2015-2016թթ. ընթացքին Թուրքիոյ մէջ կալանաւորներու թիւը աճած է 8 տոկոսով: Այս ցուցանիշով երկրորդ երկրորդ տեղը կը գրաւէ Եւրոպայի մէջ՝ Պուլկարիայէն յետոյ:

Թուրքիան նաեւ առաջատար

է այն կալանաւորներու թիւով, որու դէմ յարուցուած դատական գործընթացները դեռեւս չեն աւարտուած: Նման բանտարկեալներու թիւը Թուրքիոյ մէջ կը կազմէ 37.1 տոկոս:

Զեկույցէն յայտնի է նաեւ, որ Թուրքիոյ բանտերու մէջ 3 տոկոսով աւելի շատ բանտարկեալ կայ, քան կրնան ընդունիլ: Թուրքիան երկրորդ տեղը կը գրաւէ նաեւ 10 տարուան եւ աւելի ազատագրման դատապարտուած բանտարկեալներու թիւով: Անոնք դատապարտեալներու ընդհանուր թիւի 45 տոկոսը կը կազմեն: Իսկ առաջին տեղը կը գրաւէ Յունաստանը՝ 50 տոկոս ցուցանիշով: Նշենք, որ Եւրոպայի համար այս չափանիշի միջին ցուցանիշը 15 տոկոսն է:

Ըստ բնակչութեան թիւի եւ բանտարկեալներու թիւի յարաբերակցութեան՝ Թուրքիան երկրորդ տեղը կը գրաւէ Վրաստանէն յետոյ: Թուրքիոյ մէջ իւրաքանչիւր 10.000 բնակիչէն 245-ը ազատագրուած է:

## Նոր Օրէնքը Հնարաւորինս կը Փոքրացնէ Նոր Նախագահի Լիազօրութիւնները

«Ժամանակ» թերթը գրած է. «Վերջին շրջանում կառավարութեան կողմից խորհրդարան բերուող գրեթէ բոլոր օրէնքների նախագիծերը մի ընդհանուր ուղղուածութիւն ունեն՝ հնարաւորինս փոքրացնել նախագահի լիազօրութիւնների շրջանակը, այն հասցնելով գրոյի:

Այդ միտումն այն աստիճանակնառու է, որ նոյնիսկ ամենաիշխանահաստի հանրապետականների նիւրադերն են տեղի տալիս՝ ստիպելով ընդլայնել դրա դէմ: Աժ արտահերթ նիստում երկրորդ ընթացքում կ'ընդունուի կառավարութեան կառուցուածքի եւ գործունէութեան մասին օրէնքի նախագիծը:

Այդ նախագիծն անսահմանփակ իրաւունքներ է վերապահում վարչապետին, եւ ընդհակառակը՝ զրո իրաւասութիւն նախագահին: Այս օրէնքը նոյնիսկ վիրաւորական տարբեր է պարունակում նախագահի համար»:

«Ժողովուրդ» թերթը իր կարգին գրած է որ, Սերժ Սարգսեանի իշխանութիւնը հետեւողականօրէն կը նախապատրաստուի ապրիլին լրատուամիջոցներու առջեւ փակել բոլոր դռները՝ այդպէս Հայաստանի մէջ սահմանափակելով խօսքի եւ մամուլի ազատութիւնը:

«Կառավարութեան կառուցուածքի եւ գործունէութեան մասին» օրինագիծին մէջ գործադիրի նիստերը դուրսփակ իրականացնելու դրոյթէն յետոյ կառավարութիւնը, յանձին ՀՀ արդարադատութեան նախարարութեան, մէկ այլ նորամուծութիւն յորինած է:

Հիմա ալ օրէնսդրական հիմքեր կը ստեղծեն, որպէսզի Երեւանի քաղաքապետը աւագանիի նիստերուն արգիլէ լրագրողներու ներկայութիւնը:

Աժ պետաիրաւական հարցերու մշտական յանձնաժողովի նիստին արդարադատութեան նախարար Դաւիթ Յարութիւնեանը

ներկայացուց «Երեւան քաղաքի մէջ տեղական ինքնակառավարման մասին» օրէնքի մէջ փոփոխութիւններու նախագիծը, ուր սահմանուած է, որ քաղաքապետարանի մէջ լրագրողները իրենց մասնագիտական գործունէութիւնը կ'իրականացնեն «Երեւանի ՏԻՄ նստավայրի մէջ առանձնացուած յատուկ տեղը, որ ապահովուած է աւագանիի հրապարակային նիստերը առցանց հեռարձակմամբ դիտելու եւ ձայնագրելու տեխնիկական հնարաւորութեամբ»:

Օրէնսդրական այս նախաձեռնութիւնը, թերեւս, պատահական չէ: Երեւանի աւագանիի՝ 13 Փետրուարի ամօթալի նիստէն յետոյ քաղաքապետ Տարօն Մարգարեանը երկար փորձեց, բայց չկրցաւ սահմանափակել լրագրողներու ներկայութիւնը աւագանիի նիստերուն: Այդ քայլին դիմելու համար ան չունէր իրաւական հիմքեր:

Եւ հիմա Դաւիթ Յարութիւնեանը որոշած է օգնութեան հասնիլ կուսակցական գործընկերով՝ օրինագիծի մէջ ներառելով լրագրողներու դէմ իրաւական սահմանափակումներ ենթադրող դրոյթներ: «Ժողովուրդ» օրաթերթը առիթ ունեցած է տեղեկացնել, որ իշխանութիւնները մտադրուած են ապրիլին, երբ նոր Սահմանադրութեան պարագային ձեւաւորուի նոր իշխանութիւնը, սահմանափակումներ մտցնել լրատուական դաշտի մէջ՝ լրագրողներու առջեւ փակելով դռները. այդպէս կը ցանկանայ ապագայ վարչապետ Սերժ Սարգսեանը: Եւ հիմա կը կատարուին իր ցանկութիւնները:

Մէկ նկատուում ալ. իշխանութիւնները միջազգային ասպարէզի մէջ հանդէս կու գան որպէս ժողովրդավարութեան ջատագովներ, բայց իրականութեան մէջ կ'ոտնահարեն ժողովրդավարական արժէքները, խօսքի ազատութիւնը»:

## Էրտողանը Անձամբ Հրահանգած Է

Շարունակուած էջ 1-էն

էք, պարոն նախագահ», - հարցուցած է պատգամաւորը: Այնուհետեւ զեկուցած է Պերլինի մէջ քննարկուող բանաձեւի դէմ բողոքի ցույցերու մասին՝ աւելցնելով. «Կը սպասեմ ձեր հրահանգները»: Ի պատասխան էրտողանը ըսած է, որ կապի մէջ կը մնայ Քիւլունքի հետ:

Գերմանական պարբերականը նշած է, որ հեռախօսագրոյցի բովանդակութիւնը ապշեցուցած է Հեսսենի ոստիկանութիւնը, որոնք արձանագրած են, թէ ինչ մեծ ուշադրութիւն կը դարձնէ Անգարան Հայոց ցեղասպանութեան բանաձեւին ու ընդունման դէմ Պերլինի մէջ կազմակերպուելիք ցույցերուն եւ աւելին՝ անձամբ ինք՝ երկրի նախագահը, կը հետաքրքրուի մանրամասնութիւններով:

Der Spiegel-ը յայտնած է, որ ներկայիս հետաքննութիւն կ'իրականացուի՝ պարզելու Քիւլունքի կապը Թուրքիոյ զաղտնի ծառայութիւններու հետ, երբ 2017 թուականին տեղեկութիւններ յայտնուած են, որ պատգամաւորը գումարներ տրամադրած է Թուրք գերմանական ազգայական Osmanen

Germania խմբաւորման: Համաձայն տեղեկատուութեան՝ գումարները օգտագործուած են քրտական խումբերու դէմ զինամթերք գնելու համար:

Գերմանիոյ Պունտեսթակը 2016 թուականի Յունիսի 2-ին ընդունեց Հայոց ցեղասպանութեան ճանաչման բանաձեւը, որ ունի «1915 եւ 1916 թուականներուն հայերու եւ միւս քրիստոնեայ փոքրամասնութիւններու ցեղասպանութեան յիշատակի եւ ոգեկոչման մասին» անուանումը: Բանաձեւը ընդունուեցաւ ունենալով ընդամենը մէկ դէմ, մէկ ձեռնպահ ձայն: Ելույթ ունեցողները միաձայն կ'ընդգծէին անցեալի հետ առերեսման անհրաժեշտութիւնը, նաեւ՝ Հայաստանի եւ Թուրքիոյ հաշտեցման գործընթացին նպաստելու մղումները: Պունտեսթակի մէջ բարձրաձայնուած է Օսմանեան Թուրքիոյ ոճրագործութիւնը՝ նշելով, որ Գերմանիոյ քայլը ոչ թէ հայց է եւ մեղադրանք, այլ՝ խոնարհում գոհերու յիշատակի առջեւ:

Պերլինի մէջ բանաձեւի ընդունումէն յետոյ, շուրջ 1000 թուրքեր, բողոքի ցույց կազմակերպած էին:

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք  
«Մասիս» Շարաքաթերթին  
T: (626) 797-7680 massis2@earthlink.net**

### Աֆրիցի ԱՆԿՈՒՆԸ ԵՒ Այդ ԱՆԿՈՒՆԻ Մեղաւորները

#### ԲԱԳՐԱՏ ԷՍԴՈՒԳԵԱՆ

Յեղասպանութեան դարադարձին բացուած փակագիծը արդէն փակուած է եւ Թուրքիա սկսած է Տարտանեւի պատերազմի յաղթանակը չի շատակել ւաւանդական թուականով, որն է Մարտի 18: Թրքական զիւտարար քաղաքական միտքը երեք տարի առաջ արգելք ըլլալու համար ցեղասպանութեան դարադարձին արժանի կերպով չի շատակուելուն, յանկարծակի որոշումով թուականի փոփոխութիւն մը կատարած եւ Տարտանեւի պատերազմը նշելու համար յայտարարած էր Ապրիլ 24 թուականը: Ուրացումը իւրացուցած մտայնութեան մը համար շատ ալ զարմանալի չէր այս պարզ ու շարժութիւն շեղելու փորձը: Աւելի կարեւորն այն էր, որ միջազգային գետնի վրայ գտնուեցան քաղաքական գործիչներ, որոնք յամենայն հեշտութեամբ ընդառաջեցին Թուրքիոյ իշխանութիւններու հրաւերին, միասնաբար չի շեղու համար Տարտանեւի պատերազմի դարադարձը:

Այն ժամանակ ալ մտածած էի Եւրոպական տէրութիւններու երկերեսութեան մասին: Հարիւր տարի առաջ, երբ հայ ժողովուրդը արմատախիլ կ'ըլլար իր հարազատ երկրին մէջ, օգնութիւն պահատած էր արեւմտեան երկիրներէն կարծելով, թէ իբրեւ քրիստոնեայ տէրութիւններ անոնք անտարբեր չեն մնար իրենց կրօնակից եղբայրներուն նկատմամբ: Արդարեւ եկած պատասխանն ալ ծիծաղաշարժ ոճով կը հաստատէր քրիստոնէական եղբայրութիւնը ու կ'աւարտէր «բայց ինչ մեղք, որ Անգլիոյ թագուհիի նաւատորմը չի կրնար անցնիլ հայկական լեռնաշխարհը» տողերով: Հարիւր տարի անց նոյն Անգլիոյ գահաժառանգ իշխանին նախագահ էր տողանին հրաւերին ընդառաջելն ալ այդ մտայնութեան յարատեւութեան ապացոյցը չէ՞ միթէ:

Այս տարի նախագահ էրտողան Տարտանեւի պատերազմի չի շատակման օրը հասարակութեան կ'աւետէր Աֆրիցի անկումը: 58 օրուայ դիմադրութենէ ետք քիւրտ զինեալ ուժերը քաղաքի խաղաղ բնակիչներու կեանքը վտանգելէ խուսափելով նահանջած էին դէպի մօտակայ վայրեր եւ թրքական բանակը առանց լուրջ դիմադրութեան զրաւած էր Աֆրիցի:

Այստեղ եւս կ'արժէ արեւմտեան երկիրներու որդեգրած քաղաքականութեան մասին խօսիլ: Մինչեւ կարճ ժամանակ առաջ Սուրիոյ ներքին պատերազմի պայմաններէն իրենց համար նպաստներ ակնկալող Եւրոպական տէրութիւնները կ'ողջունէին մեծ դիմադրութիւնը ի դէմ ՏԱԻՇ կոչուած ահաբեկիչ խմբակներու: Բայց այս, երբ իր ամբողջ էութեամբ այդ ահաբեկչական խումբին զօրակցող էրտողան ռազմավարութիւն փոխեց եւ յայտարարեց թէ ինք կը պաշտպարի ահաբեկչութեան դէմ, նոյն այդ շրջանակները անմիջապէս ուղղութիւն փոխեցին եւ իբրեւ թէ հաւատարմութիւններուն: Ահա այսօր քաղաքի անկումէն ետք արեւմտեան մամուլը կրկին կ'արձագանգէ Թուրք բանակին առաջնորդող իսլամ պետութեան զինուորներուն գործադրած թալանի երեւոյթները:

Երկիրներու որդեգրած քաղաքականութեան մասին խօսիլ: Մինչեւ կարճ ժամանակ առաջ Սուրիոյ ներքին պատերազմի պայմաններէն իրենց համար նպաստներ ակնկալող Եւրոպական տէրութիւնները կ'ողջունէին մեծ դիմադրութիւնը ի դէմ ՏԱԻՇ կոչուած ահաբեկիչ խմբակներու: Բայց այս, երբ իր ամբողջ էութեամբ այդ ահաբեկչական խումբին զօրակցող էրտողան ռազմավարութիւն փոխեց եւ յայտարարեց թէ ինք կը պաշտպարի ահաբեկչութեան դէմ, նոյն այդ շրջանակները անմիջապէս ուղղութիւն փոխեցին եւ իբրեւ թէ հաւատարմութիւններուն: Ահա այսօր քաղաքի անկումէն ետք արեւմտեան մամուլը կրկին կ'արձագանգէ Թուրք բանակին առաջնորդող իսլամ պետութեան զինուորներուն գործադրած թալանի երեւոյթները:

Եթէ թալան ըսելով պիտի հասկնանք կողոպուտ, սա այդ կողոպուտի ամենաթշուառ մակարդակն է, քանի որ աւագակները կը զիջին իրենց թալանած տուներու ամենապարզ նիւթերը գողանալու: Հեռուստատեսութեան կը դիտենք նոյնիսկ բարձր, վերմակներ կամ սաւաններ յափշտակած զինուորներու կերպարանքներ: Երբ այս մասին ամսականքով կը գրուցէինք բարեկամիս հետ ան կ'առարկէր ըսելով, թէ զարմանալի ոչ մէկ բան կայ այս երեւոյթին մէջ, քանի որ նոյնը պատահած էր Կիպրական պատերազմի օրերուն ալ:

«Թուրքիա իրաւունք ունի իր սահմաններու անվտանգութիւնը ապահովելու» ըսող Եւրոպան այս վերջին օրինակով անգամ մը եւս ապացուցած եղաւ իր երկերես դիմագիծը: Իրաւ ալ այս դիմագիծը տեսնելով զարմանալը տարօրինակ է: Ուրիշ ի՞նչ պէտք է սպասէինք, երկիր մը՝ որ իր քաղաքական հաշիւները կը տեսնէ սպառնալիքներով: Բնական է որ սակարկութիւններով ալ հասնի նպատակներու:

Աֆրիցի անկումը վերջակէտ մը չէ, այլ ընդհակառակը Օսմանեան պետութեան վերակենդանացումը ցանկացող մտքի մը սկզբնակէտը: Նախագահ էրտողան անկումէն անմիջապէս ետք յայտարարեց իր նոր թիրախները, որոնք կը ծաւալին Սուրիոյ հիւսիսային հատուածն ի վեր:

Իբրեւ թէ ահաբեկչութեան

### Երուսաղէմի Պատրիարքը Դիմած է Թուրքիոյ Սահմանադրական Ատեան



Երուսաղէմի հայոց պատրիարքարանը նախապէս իրեն պատկանող կալուածներու վերատիրանալու համար դիմած է Սահմանադրական ատեան: Պատրիարքարանը Պոլսոյ մէջ ունէր բազմաթիւ կալուածներ, որոնք 1973 թուականէն ետք զրաւուած էին պետութեան կողմէ: Երուսաղէմի պատրիարքարանը այդ զրաւումներու դէմ իրաւական պայքար տարած էր Թուրքիոյ զանազան դատարաններէն ներս: Սակայն իր բոլոր դիմումները ապարդիւն մնացած էին, որուն հետեւանքով Երուսաղէմի պատրիարք Նուրհան Արք. Մանուկեան, իբրեւ վերջին օրինական մարմին դիմած է Սահմանադրական ատեանի:

Թուրքիոյ իշխանութիւնները անցեալին վերջ տուած էին պատրիարքարանը ներկայացնող Սուրբ Յակոբի անուան հիմնարկի օրինական գոյութեան: Նշենք որ Երուսաղէմի պատրիարքարանը եւ Սուրբ Յակոբ հիմնարկը իրականութեան մէջ նոյն մարմինն են, քանի որ պատրիարքարանի պաշտօնական անուանումին մէջ անգլերէնով պիտի չի լուի Saint James եւ արաբերէն Մար Յակոբ անուններով: Բացի այս օրուայ պատրիարքը կ'ընդունուի որպէս հիմնադրամի նախագահ: Երեւոյթ մը, որ այնքան ալ հասկնալի չի թուիր Թուրքիոյ իշխանութիւններուն, որոնք պաշտօնապէս լուծարքուած կը համարեն սոյն հիմնադրամը:

դէմ պայքարելու նպատակով ճամբայ ելած բանակը հիմա կը փորձէ իր երթը շարունակել դէպի Սինճար, Արաբիոնար, Թէլ Ապիատ, Ռեսլայն եւ մինչեւ Ղամիշլի: Այսինքն Սուրիա 1967-ին իսրայէլին զիջած Կոլանի

Այս մասին պատրիարքարանի իրաւապաշտպան Ալի Էլպէյօղլու դիտել կու տայ, թէ կարելի չէ Սուրբ Յակոբի հիմնարկը լուծուած համարել, մանաւանդ երբ ան կը պահէ իր գոյութիւնը այս անուանումով միջազգային իրաւական գետնի վրայ: Մնաց որ Երուսաղէմի պատրիարքարանը արտերկրեան հաստատութիւն մը ըլլալով Թուրքիոյ իշխանութիւնները չեն կրնար անոր գոյութեան մասին վճիռ արձակել: Փաստաբանի փոխանցած տեղեկութիւններով յայտնի կը դառնայ թէ Նուրհան պատրիարք սեփականութեան իրաւունք կը պահանջէ աւելի քան 100 միլոն կալուածներու վրայ եւ այդ պահանջատիրութիւնը յետադու կ'ակնկալուի Սահմանադրական ատեանին:

Վերջերս այս դատերու վերաբերեալ թղթածրարներու քննարկման նպատակով Նուրհան պատրիարք այցելած էր քաղաքս եւ հանդիպումներ ունեցած փաստաբան Էլպէյօղլուի հետ: Պատրիարքի այս այցելութիւնը կասկածեալ եւ առեղծուածային մեկնաբանուած էր «Ժամանակ» օրաթերթի կողմէ, որուն լրատուութեան դէմ պատրիարքարանը փաստաբանի միջոցաւ հրատարակեց հերքում մը, փոխանցելով զանազան մանրամասնութիւններ թէ Նուրհան պատրիարքի այցելութեան եւ թէ շարունակուող գործընթացի մանրամասնութիւններու շուրջ:

բլուրներէն ետք պիտի ունենայ բազում տարիներ գլխացաւ պատճառելու ատակնոր դիւանագիտական ճգնաժամ մը: Խերով ըլլայ բոլորիս: «ԱԿՕՍ»



**MARONIAN**  
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served our community's insurance needs.

CA Insurance Lic. #0C99815



**WELCOME HOME & AUTO INSURANCE**

Along with all of our other *Trusted Insurance Services*






We will shop you with over 20 A-rated companies to find the best fit for your needs and budget.

CALL US FOR A PERSONALIZED QUOTE

**(818) 500 9305**

### ՐԲԸՍ ՍԱԹԱՄԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ ՄԻՇՏ ՊԱՏԵՆՇԻ ՎՐԱՅ



#### ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Սփիւռքահայ ինքնութեան պահպանման դժուարին պայմաններու տակ, արդի հայ նոր սերունդներու ազգային պատկանելիութեան գիտակցութիւնը ամբարայնելու հեռանկարը իր հիմնական առաքելութեան առանցք դարձուցած, նախապէս ՀԲԸՄ «Արտաւազը» եւ ներկայիս ՀԲԸՄ «Սաթամեան» անունը կրող թատերախումբը, այսօր, մօտ չորս տասնամեակներէ ի վեր, գնահատելիօրէն կը ծառայէ մեր հայ թատրոնին եւ հայապահպանութեան սրբազան գուպարին:

Հայանպաստ իր այս առաքելութեան հետամուտ, Սաթամեան թատերախումբը, այս տարի եւս,

րած Սեւակի եւ Շուշիկի պատմութենէն, որոնց միացման խստօրէն կը հակառակէր, անգամ կ'արգիլէր, Շուշիկի հայրը՝ Հայկազ, որ իր անհաւատարմութեան պատճառաւ, նաեւ Սեւակին հայրը ըլլալու խնդրայարոյց տառապանքը կը քայքայէր իր ջղային հաւասարակշռութիւնը...:

Գործող դերակատարները լաւապէս եւ հարազատօրէն մեկնաբանեցին իրենց ստանձնած դերերը, երգիծանքը զօրացուցին, միշտ խանդավառ պահեցին ներկայ հանդիսատեսները եւ արժանացան անոնց գնահատութեան:

17 տարեկան Սեւակի եւ 16 տարեկան Շուշիկի դերերով Փիթըր Նշան եւ Ալիսըն Քէշիշեան, հարազատօրէն մարմնաւորեցին



նախաձեռնած է հայ թատերասէր հասարակութեան «Երկու կնիկ մէկ էրիկ» երգիծական թատերախումբով ծանօթ՝ Րէյ Գունիի համանուն թատերախաղի երկրորդ մասի բեմադրութիւնը, որուն ներկայ գտնուելու հաճելի առիթը ունեցաւ ընթացիկ տարուան Կիրակի Մարտ 18-ին, «Վաչէ եւ Թամար Մանուկեան» Կեդրոնէն ներս:

Իր շեշտուած երգիծական բովանդակութեամբ զուարճացուցիչ ներկայացում մը իրօք: Ներկայ հանդիսատես թատերասէրները, բեմադրութեան ամբողջ տեղողութեան ընթացքին բեւեռացուած երգիծական տեսարաններով՝ հազիւ թէ կը կարողանային զսպել իրենց պոթկացող խնդուքը, ինչպէս տեսնուած էր համանուն թատերախաղի առաջին մասի ներկայացման պարագային, 2003 թուականին:

Երգիծագրի նիւթը կեանքէ վերցուած սովորական պատմողութիւնն էր, պատահաբար համացանցի միջոցաւ իրարու համակ-

իրենց վաղ երիտասարդական ըմբոստ նկարագրի գիծերը: Շուշիկ կը մերժէր իր հօր պատուէրները եւ ի հեճուկս անոր կամքին, տեսութեան պիտի երթար Նշանին հետ, գաւաթ մը սուրճի շուրջ՝ տեսնելու համար, թէ ինչպէս կրնայ պատահիլ, որ իրենց հայրերը, երկուքով, կրնան ունենալ միեւնոյն անունը, մականունը, տարիքը եւ գործի ասպարիզը:

Իր համարձակ շարժումներով, նիստ ու կացով եւ մշտական ժպիտով, Արփի Սամուէլեան՝ վարժ դերասանուհի մը տպաւորիչ դերին մէջ կը գտնուէր, Սեւակի մօր թամարի դերով:

Շուշիկի մօր եւ Հայկազի կնկան՝ Արփիկի դերին մէջ, Նարինէ Աւագեան իր ուրույն դերակատարութեամբ, արդէն իսկ ցոյց կու տար ընդունելի դերասանուհիի գնահատելի շնորհները: Ան իր դէմքի մեկնաբանութիւններով թափաւոր ծամածուծութիւններով, աչքերու իմաստալից պրկումներով

### ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ՏՊԱԻՈՐԻՉ ՀԱՄԵՐԳԸ



վերջերս Փասատինա Քաղաքին Մէջ սկսաւ առաւել եւս ուշագրաւ դառնալ մարգա-մշակութային կեանքը:

Այդպիսիներէն էր անցեալ Կիրակի Մարտի 25ին «Նուր» սրահին մէջ տեղի ունեցած համերգը: Ներկայ էին Փասատինայի քաղաքապետ Թերրի Թօրնիզը, ինչպէս նաեւ շրջանի կրօնական եւ քաղաքական ու մշակութային տարբեր կազմակերպութեան ներկայացուցիչները: Սոյն միջոցառումը նուիրուած էր Հայոց Յեղասպանութեան, հրեաներու ողջակիցումի եւ ստրկութեան զոհերու յիշատակին: Առանձնապէս յիշատակուած էր նաեւ Քրիստ-

ւոյ տարեցներու երգչախումբը: Բոլորը միասին կարելի է ըսել համադրուած գեղարուեստական բարձրորակ կատարումներու հիասքանչ ծաղկեփունջ մըն էր, որով ներկաներուն մօտ ակներեւ էր երաժշտականութեամբ յագեցուած ներքին անբացատրելի գոհունակութիւն մը...: Իսկ այս բոլորի արտաբերումն էր այն երկարատեւ ծափահարութիւնները, որոնք կը յաջորդէին իւրաքանչիւր կատարումին:

Յերեկոյթի դափնեպսակը հանդիսացաւ օրուան իմաստը խորհրդանշող մոմավառութիւնը: Արդարեւ բեմ հրաւիրուեցան կրօնական տարբեր հաւաքականու-



իան Շահնազարեանի անունը:

Ձեռնարկի հանդիսավար կազմակերպիչ յանձնախումբի անդամ Նաթ Նեհտարը, իր ելույթին մէջ ոգեկոչեց Հայոց Յեղասպանութեան, ողջակիցման եւ աշխարհի տարբեր շրջաններու մէջ գերութեան եւ ստրկութեան զոհերու յիշատակը եւ մաղթեց որ նման երեւոյթներու առջեւ չի գտնուի համայն մարդկութիւնը, որպէս զի ազգերն ապրին խաղաղ ու համերաշխ կեանք մը իրենց բնակավայրերու մէջ: Այլ խօսքով համատարած խաղաղութիւն բովանդակ աշխարհ:

Այս առթիւ գործադրուեցաւ գեղարուեստական բարձրորակ յայտագիր մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին գաղութային եւ համաշխարհային ճանաչում ունեցող տաղանդաւոր եւ շնորհալի արուեստագէտներ Վաչէ Մանկրեան, Եին Եին Հուսանկ եւ Ալան Չափման (դաշնակ), Ալիսոն Գրաուֆորտ Կարէն Պէնժամին եւ Արփի Այնթապլեան (սոփրանօ), Լինկ Եան (թաւ ջութակ) եւ Ճօնաթան Ուէյ (ջութակ): Տպաւորիչ ելույթով մը հանդէս եկաւ նմանապէս Մկրտչական Եկեղեց-

թիւններ ներկայացնող չորս հոգեւորականներ Արթ. Տ. Սարգիս Քհնյ. Բեթոյեան, հովիւ Լարի Գամպէլ, ռաբբի Ռութ Հարիս եւ շէյխ Մուհամմէտ Ազպար Խան: Անոնցմէ իւրաքանչիւրն իր լեզուով եւ արարողակարգով շատ հակիրճ մաղթանք մը կատարեց ի նշան խաղաղութեան եւ բարգաւաճման: Մինչ այդ երրեակ նուագողներու «Յիշատակութիւն» ի կատարումով (schindler's List) ներկաները յոտնկայս իրար ձեռք բռնած, հետեւեցան չորս մոմերու լուսավառման տպաւորիչ արարողութեան, որպէս խորհրդանիշ միասնութեան եւ ազգամիջեան խաղաղութեան:

Գնահատելի ձեռնարկ մըն էր, որմէ ներկաները բաժնուեցան գեղարուեստական յագեցուածութեամբ, իրենց զօրակցութիւնը յայտնելով ազգերու միասնութեան եւ խաղաղութեան արդար դատին ի նպաստ:

Կը շնորհաւորենք սոյն գովելի միջոցառումը կազմակերպողները, մասնաւորաբար գործադրողները (producers) Վահէ Աջապահեանն ու Նաթ Նեհտարը:

Գ. Մ.

### Ս. ԶԱՏԻԿԻՆ ԲՐԻՍՏՈՍԻ ԶԱՐՈՒԹԵԱՆ ԱՇՏԱՆՈՐՈՎ ՊԱՏԳԱՍԸ

Among the numerous Armenian Diasporas around the world, the one in Carpathian Europe covers present Rumania, Western Ukraine, and Eastern Poland. It is particularly little known, perhaps because most of the Armenian population living there has been mostly assimilated. Since the end of WW II, one notices an important revival, so that it is time to launch a general study of that subject. We shall try, as much as possible, to answer the following questions: when and why did Armenian communities settle in that area, what were their routes, what have been their relations with the other ethnic groups, what did they bring to the various local cultures?

Claude Mutafian was born in 1942 in the suburbs of Paris to survivors of the 1915 Armenian Genocide. He has published many books about various topics concerning Armenia, among which the *Atlas Historique de l'Arménie* (2001) which covers thirty centuries. He also organized many exhibitions, including "The Armenian Kingdom of Cilicia" (Paris, Sorbonne, 1993), "Roma-Armenia" (Vatican, Great Sistine Hall, 1999), and "Armenia, the Magic of Writing" (Marseilles, 2007). His field of interest is essentially the Medieval period, in particular Armenians' relations with Crusaders and Mongols, and his PhD thesis was on "Armenian Diplomacy in the Levant During the Crusades" (Paris-Sorbonne, 2002). In 2012 he published a two volume study *L'Arménie du Levant*, dealing with the Armenian world from the 11<sup>th</sup> to the 14<sup>th</sup> century. For this work he received in 2013 the highest university diploma, *Habilitation à diriger des recherches*. The title of his most recent book is "The Saga of the Armenians from the Ararat to the Carpathians."

For information about the event, please contact (747) 500-7585 or [eskijian@ararat-eskijian-museum.com](mailto:eskijian@ararat-eskijian-museum.com).

### ՁԱՅՆ, ՈՐԸ ԽՈՐԱՊԵՍ ՅՈՒՋՈՒՄ Է ՅՈԳԻԴ

Մաեստրո Կոնստանտին Օրբելեանը պատմում է «Տարուայ դասական ալպոմ» մրցանակին արժանանալու եւ Դմիտրի Խվորոստովսկու հետ համագործակցութեան տարիների մասին



### ՍՈՆԱ ՀԱՍԱԼԵԱՆ

Մարտի 11-ին, Ռուսաստանի Bra Vo Միջազգային երաժշտական մրցանակաբաշխութեան ժամանակ «Դելոս» ստուդիայի թողարկած Վերդիի «Ռիգոլետո»-ն յայտարարուեց 2018թ-ի «Տարուայ դասական ալպոմ» անունակարգի յաղթողը: Bra Vo-ի մրցանակաբաշխութիւնը համարուած է Ռուսաստանի «Գրեմմի»-ն: «Գրեմմի» մրցանակաբաշխութեան թեկնածու Կոնստանտին Օրբելեանի դիրիժորութեամբ հնչող «Ռիգոլետո»-ի այս ուշագրաւ ձայնագրութեան մէջ գլխաւոր դերում հանդէս է գալիս կեանքից վաղաժամ հեռացած բարիտոն Դմիտրի Խվորոստովսկին՝ աստղային հռչակ վայելող կազմի, Կառլոսաի Քաղաքային սիմֆոնիկ նուագախմբի ու Կառլոսաի Պետական երգչախմբի համատեղ մասնակցութեամբ:

Կոնստանտին Օրբելեանը համաշխարհային ճանաչում ունեցող դաշնակահար է եւ դիրիժոր, ինչպէս նաեւ՝ Ռուսաստանի Դաշնութեան վաստակաւոր արտիստ: 2016թ-ից, նա ստանձնել է Հայաստանի Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի (Երեւանի Օպերային թատրոնի) Գլխաւոր տնօրէնի եւ Գեղարուեստական ղեկավարի դերը:

Օրբելեանի «Սվիրիդով. Հեռացող Ռուսաստան» ձայնագրութիւնը, որտեղ ներկայացուած են նաեւ Դմիտրի Խվորոստովսկին ու Սանկտ Պետերբուրգի Պետական սիմֆոնիկ նուագախումբը, անցեալ տարի դարձաւ «Գրեմմի»-ի թեկնածու «Լաւագոյն դիրիժոր սոլօ վոկալ ալբոմ» անունակարգում:

Հարցազրույցի համար մենք Օրբելեանի հետ կապ հաստատեցինք, երբ նա Լոնտոնում էր՝ մասնակցելու Մարտի 18-ին Թագաւորական օպերայում կայանալիք Դմիտրի Խվորոստովսկու չիչատակին նուիրուած համերգին:

Հ- Աւելի քան 25 տարի շարունակ, մինչ Զեր Եւրոպայում որպէս երեւանի Օպերային թատրոնի տնօրէն, Դուք առանցքային գործիչներից մէկն էք հանդիսացել Ռուսաստանի երաժշտական կեանքում, որպէս Մոսկուայի Կամերային նուագախմբի ու Ռուսաստանի Ֆիլիարմոնիկ նուագախմբի երաժշտական ղեկավար եւ յաճախ նաեւ որպէս իրաւորուած դիրիժոր ռուսական այլ առաջատար նուագախմբերի համար: Կարո՞ղ էք նկարագրել Զեր զգացումները, երբ Վերդիի «Ռի-

գոլետո»-ի Զեր ձայնագրութիւնը դարձաւ BraVo-ի «Տարուայ դասական ալպոմ»-ը:

Պ- Իմ երաժշտական շրջագրութիւնը Ռուսաստանում արտասովոր կերպով ինտենսիւ անցաւ: Դեռեւս 2000թ-ի Հոկտեմբերն էր, երբ ես Նիւ-Եորքում հանդիպեցի Դմիտրի Խվորոստովսկուն՝ «Դելոս» ձայնագրման ստուդիայի հետ (DELOS Productions) (ձայնագրման ընկերութիւնը, որի հետ ես աշխատում եմ) մի պայմանագիր քննարկելու նպատակով: Մենք սկսեցինք մեր առաջին ձայնագրութիւնները 2001թ-ի ամբարնը եւ շարունակեցինք դրանք մինչեւ 2016թ-ի ամառը: Վերդիի սքանչելի «Ռիգոլետո» օպերայի մեր ձայնագրութիւնները կատարուեցին Լիտուանի Կառլոսա քաղաքում, որտեղ ես Կառլոսաի Քաղաքային սիմֆոնիկ նուագախմբի Գլխաւոր դիրիժորն եմ: Դժբախտաբար, 2015թ-ի Յունիսին Դմիտրին ախտորոշուել էր գլխուղեղի քաղցկեղի անբուժելի հիւանդութեամբ, եւ այդ ախտորոշումից յետոյ նա ինձ ասաց, որ իր երազանքն է ձայնագրել «Ռիգոլետո»-ն, որը տարիներ շարունակ եղել էր իր այցեքարտը, որով էլ նա ներկայացել էր աշխարհի լաւագույն օպերային թատրոններում: Այսպիսով, ես մտադրուեցի իրականացնել նրա ցանկութիւնները՝ ապահովելով հնարաւորինս բարձր մակարդակ: Դմիտրիի հետ կատարուող ցանկացած ձայնագրութեան համար պահանջուելու էր աստղային հռչակ վայելող կազմ ունենալ: Բարեբախտաբար, 2016թ-ի Յունիսին, ես կարողացայ հաւաքել միջազգային լաւագույն կազմը, որում ներառուած էին ամերիկեան փառահեղ գերաստղ սոպրանո Նադին Սիբուան եւ իտալացի հիասքանչ տենոր Ֆրանչեսկո Դեմուրոն:

Յաւօք, քանի որ մի ամբողջ օպերայի ձայնագրութեան խմբագրումն ու այն կատարելութեան հասցնելը շատ ժամանակատար գործընթաց է, սկաւառակը թողարկուեց 2017 թ.-ի Նոյեմբերի 22-ին միայն՝ Դմիտրիի մահուան օրը: Այդ պատճառով, չնայած, որ Դմիտրին վերջին խմբագրութիւնները լսել եւ արդէն ամէն ինչին հաւանութիւն էր տուել, նա այդպէս էլ չտեսաւ վերջնական տարբերակը:

Ես մեծ յուզում ապրեցի՝ լսելով, որ «Ռիգոլետո»-ի մեր ձայնագրութիւնը Մոսկուայի BraVo հեղինակաւոր մրցանակաբաշխութեան ժամանակ ընտրուել է որպէս «Լաւագոյն դասական ալպոմ»:

Ձայնագրութիւնը բարձր գնահատականների էր արժանանում աշխարհի լաւագոյն երաժշտական քննադատների կողմից, սակայն այն, որ մրցանակը շնորհուեց Դմիտրիի սիրելի հայրենիքում, «Բոլշոյ» թատրոնում, չափազանց սրտառու էր ու յուզիչ էր: Դմիտրիի ծնողներն էին այնտեղ. եկել էին ստանալու մրցանակը, եւ «Բոլշոյ» թատրոնի ողջ դահլիճը ինքնաբուխ եւ բուռն ծափահարութիւններով ողջունեց նրանց: Բոլորի աչքերում արցունքներ կային:

Հ- Ձեր համագործակցութիւնը Դմիտրի Խվորոստովսկու հետ համարուած է վերջին ժամանակների երաժշտական պատմութեան հիացմունքի արժանի իրադարձութիւններից մէկը: Ի՞նչ տպաւորութիւններ ունեք՝ կապուած Խվորոստովսկու, ինչպէս նաեւ Կառլոսաի Քաղաքային սիմֆոնիկ նուագախմբի ու Կառլոսաի Քաղաքային երգչախմբի մասնակցութեամբ «Ռիգոլետո»-ի ձայնագրման աշխատանքների հետ:

Պ- Դմիտրիի հետ աշխատելը մի իւրայատուկ եւ բացառիկ նուէր էր ճակատագրի կողմից: Միաժամանակ, իւրաքանչիւր համերգի կամ ձայնագրութեան նախապատրաստական աշխատանքները միշտ շատ ինտենսիւ էին, եւ ես հսկայական պատասխանատուութիւն էի զգում ցանկացած նուագախումբ՝ Դմիտրիի չափազանց բարձր չափանիշներին համապատասխանեցնելու գործում: Բարեբախտաբար, Կառլոսա Նուագախմբի ու Երգչախմբի հետ Դմիտրին նախկինում էլ բաւական դրական փորձ էր ունեցել, երբ դեռ 2013թ-ին մէկ այլ այցեքարտային կատարում էինք ձայնագրում՝ Վերդիի «Սիմոն Բոկանեգրա»-ն: Կառլոսաի Ֆիլհար-

մոնիկ նուագախումբն ու վարչակազմը ձայնագրման ամբողջ ընթացքում մեզ անսահման աջակցութիւն ցուցաբերեցին, իսկ մեր ձայնագրման ինժեներներն ու պրոդուսերները Վիլիոսան ու Ալեքսանդրա Կերասը լաւագոյնն էին իրենց գործում:

Հ- Opera News-ում Խվորոստովսկու ձայնը բնութագրուած է որպէս «գրկախառնութեան լաւագոյն տեսակ, որը արտասովոր կերպով քերթ ու հզօր է, բայց չի խեղդում, չի կլանում քեզ, ու կապանքների մէջ չի պահում»: Դիրիժորի տեսանկյունից, ի՞նչ է Եւրոպայում աշխատել Խվորոստովսկու մասն բացառիկ բարիտոնի հետ՝ տեխնիկական եւ գեղագիտական առումներով:

Պ- Ինչպէս քիչ առաջ նշեցի, Դմիտրիի հետ աշխատանքը հսկայ պատասխանատուութիւն էր: Երգիչների հետ աշխատելիս իմ հիմնական խնդիրն այն է, որ թոյլ տամ նրանց բաւարար կերպով ազատ զգալ, որ կարողանամ նրանց աջակցել ու հնարաւորութիւն տալ, որպէսզի իրենք իրենց լիարժէքորէն եւ ամբողջապէս արտայայտեն: Ինձ թւում է, որ Դմիտրին զգում էր իմ այդ կարողութիւնը՝ նրան տալով իմ ամբողջ աջակցութիւնն ու արտաշատուելու ազատութիւնը: Դմիտրին եւ ես ոչ միայն ժամանակ առ ժամանակ համատեղ աշխատում էինք տարբեր ծրագրերի վրայ, այլեւ ինտենսիւ աշխատանք էինք տանում՝ ամէն տարի աշխարհի կարեւորագոյն համերգասրահներում երկարատեւ համերգային շրջագայութիւններով հանդէս գալու եւ ձայնագրութիւններ կատարելու նպատակով: Մենք երկար

Շար.ը էջ 19

AGBU SATAMIAN THEATRE GROUP  
Կը անրկայացնէ՝

# ԵՐԿՈՒ ԿՆԻԿ, ՄԷԿ ԷՐԻԿ

## Երկրորդ Մաս

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԵԿ ԱՐԱՐՈՎ  
Գեղիմակ Բեմադրիչ՝  
ՐԵՅ ԳՈՒՆԻ ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ

A COMEDY IN 1 ACT  
**CAUGHT IN THE NET**  
Written by RAY COONEY Directed by KRIKOR SATAMIAN

ՄԱՐՏ 17-18 / 24-25, 2018  
ԱՊՐԻԼ 7-8 / 14-15

MARCH 17-18 / 24-25, 2018  
APRIL 7-8 / 14-15

Հ.Բ.Ս.Ս. Վաչէ եւ Թամար Մանուկեան Կեդրոն  
2495 E. Mountain Street, Pasadena, CA 91104  
Շաբաթ օրերը ժամը 8:00-ին, Կիրակի 6:00-ին

A.G.B.U. Vatche & Tamar Manoukian Center  
2495 E. Mountain Street, Pasadena, CA 91104  
Saturday performances at 8:00 pm, Sundays at 6:00 pm

Տոմսերը կարելի է ապահովել / Tickets available at:  
Հ.Բ.Ս.Ս.Ի ԳՐԱՍԵՆՍԵՎԿԸ / A.G.B.U. OFFICE (626) 794-7942  
ՊԵՐՏԵ ԳՐԱՏՈՒՆ / BERJ BOOKSTORE (818) 244-3830  
ԱՊՐԻԼ ԳՐԱՏՈՒՆ / ABRIL BOOKSTORE (818) 243-4112  
ITSMYSEAT.COM/YERGOU  
Մուտքի Նուէր / Donation \$30

# ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԴԵՌՈՒՄՍԱՄԱՐԱԹՈՆԻ ԱՌԹԻ

## ՎԱՐԱՆ ԲԱՅԱՐԵԱՆ

2018-ի Փետրուարի 15-ի երեկոյեան հեռախօսի անսպասելի գանգը ստիպեց ինձ վերջիչել տարիներ առաջ գրածս «Մտորումներ հեռուստամարաթոնի առթիւ» յօդուածս, որը տեղ է գտել իմ 2011-ին Երեւանում հրատարակուած «Շարունակուող երթ» գրքում:

Նկատի ունենալով վերոյիշեալ հեռախօսագանգով ինձ առաջարկը, որը կապ ունի «Հայաստան» հիմնադրամի հետ, նշուած յօդուածը նորից կարգացի, որը արդիական է հնչում եւ որոշեցի ուղարկել մամուլին նորից լոյս տեսնելու համար, կատարելով որոշ աւելացում: Ահա այն.

Չանգահարողը կարօ անունով մի տղամարդ էր: Նա նշեց, որ «Հայաստան» հիմնադրամը միջոցառում է կազմակերպում: Դուք նրա ամբողջ գոյութեան ընթացքում մասնակցել էք նուիրատուութեանը, իսկ անցած տարի (2017 թ.) չէք մասնակցել, խնդրում ենք կատարել ձեր նուիրատուութիւնը եւ մասնակցել նշուած միջոցառմանը: Ես պատասխանեցի, որ 2017-ին իրօք նուիրատուութիւն չեմ կատարել «Հայաստան» հիմնադրամին, քանի որ 2009 թ. նրա աշխատողները փոքրիկ խնդրանքս չկատարեցին ժնեւում ապրող քեռուս տղայի՝ Վահրամ Մուրադեանի հեռախօսի համարը ինձ չյայտնեցին, որը միայն այդ տարի 320 եւրօ էր նուիրել «Հայաստան» հիմնադրամին:

Այնուհետեւ կարոն լսափողը փոխանցեց Ազատուհուն: Երբ նրան բացատրեցի նոյն բանը, նա ասաց, որ հեռախօսների համարներ չեն տալիս ապահովութեան նպատակով: Յօդուածում ես գրել եմ նաեւ Լոս Անճելոսում «Հայաստան» հիմնադրամի գրասենեակում աշխատող Ազատուհուն մասին, որը կարծում եմ հետս խոսող Ազատուհին էր: Նրա չհիմնաւորուած պատասխանը հուշեց ինձ եւ մի քիչ կոշտ խօսեցի հետը: Յանկարծ նա ասաց, որ աշխատանքից ուշանում է, պէտք է գնա, այդ պահին ես գլխի ընկա, որ զանգը Երեւանից էր: Նրա պատասխանը հիմնաւորուած չէր, որովհետեւ «Հիմնադրամ»-ի աշխատողները կարող էին զանգահարել Վահրամին եւ ճշտել մեր ազգակցական կապը: Ամէն դէպքում այդ պահի կոշտութեան համար ներողութիւն եմ խնդրում Ազատուհուն:

Փետրուարի 19-ի երեկոյեան մի զանգ եւս ստացա Լոս Անճելոսի «Հայաստան» հիմնադրամի գրասենեակի աշխատողից, կարծեմ անունը Արմինէ էր: Նա նոյն հարցով էր զանգել, ինչ որ Ազատուհին: Երբ նա իմացաւ այդ մասին, ներողութիւն խնդրեց եւ անջատեց հեռախօսը:

Պարզուած է, որ հիմնադրամի տարբեր գրասենեակների աշխատողները չեն համագործակցում միմեանց հետ...:

Ես կուհուս եմ, որ «Հայաստան» հիմնադրամից միայն ինձ չեն զանգել, զանգել են այն մարդկանց, որոնք 2017-ին նուիրատուութիւն չեն կատարել հիմնադրամին: Սա լուրջ հարց է եւ շատ ցաւալի փաստ, քանի որ վերջին տարիների «Հայաստան» հիմնադրամի հեռուստամարաթոնների ժամանակ հաւաքուած գումարները նուազում են: Կարող է պատճառը հիմնադրամում

աշխատողների ոչ ճիշտ աշխատեւածեւն է, կամ կան ուրիշ պատճառներ, որոնք միգուցէ անհրաժեշտ է քննարկուեն հիմնադրամի պատասխանատուների կողմից...: Ժողովուրդը կորցնում է վստահութիւնը հիմնադրամի նկատմամբ, որը անցած տասնամեակներին հսկայական ներդրում է ունեցել Հայաստանում եւ, յատկապէս, Արցախում: Սա նշանակում է, որ ինչ որ բան սխալ է հիմնադրամում...:

Քեռուս անունը Յակոբ էր: 1967 թ. Վահրամը հովանաւորում է ժնեւի հայկական եկեղեցու վերանորոգումը եւ եկեղեցին օծում են քեռուս անունով՝ Ս. Յակոբ, որի օծմանը ներկայ են եղել նաեւ քեռակինս՝ Գոհարը եւ տղան՝ Արամը՝ Վահրամի եղբայրը: Ես մի քանի անգամ զանգահարեցի եկեղեցի, բայց ոչ հայերեն էին խօսում, ոչ էլ անգլերէն...:

2017 թ. Նոյեմբերի 15-ին մի առիթով հանդիպեցի Հայաստանեայց Առաքելական եկեղեցու Արեւմտեան թեմի առաջնորդ Արք. Յովնան Տէրտէրեանին: Քանի որ ժնեւի եկեղեցին պատկանում է էջմիածնական թեմին, առիթից օգտուելով նրան խնդրեցի օգնել ինձ վերոնշեալ հարցում: Նա խոստացաւ, բայց տակաւին պատասխան չստացայ...:

\*\*\*

Յաճախ ինձ հարցնում են, թէ ինչու՞ առաջուկ նման յաճախակի յօդուածներ չեմ գրում:

Մօտ մի տասնամեակ է հեռացել եմ ազգային-հասարակական ակտիւ գործունէութիւնից առողջական վիճակիս պատճառով, բայց մինչեւ 2006 թ. գոնէ թղթակցում էի թերթերին: 2006 թ. Երեւանում եղբորս տղայի վաղաժամ մահից յետոյ հոգեբանական ապրումների մէջ եմ եւ ինձ մօտ յօդուածները դժուար երկունքով են մէջտեղ գալիս...:

Սոյն թուի Նոյեմբերի 25-ին տեղի ունենալիք «Հայաստան» համահայկական հիմնադրամի հեռուստամարաթոնի առթիւ որոշեցի որոշ մտորումներ կիսել ընթերցողի հետ:

Իմ ազգային-հասարակական գործունէութեան ընթացքում, երբ թէ չլանի հայրենակցական միութեան ատենապետն էի եւ Հայրենակցական միութիւնների միացեալ մարմին (ՀՄՄՄ) փոխատենապետը, միշտ մասնակցել եմ «Հայաստան» համահայկական հիմնադրամի հեռուստամարաթոնների կազմակերպչական աշխատանքներին, իսկ մինչ այդ, երբ թէ՛ պատերազմ էր Արցախում՝ Medical Outreach for Armenians հաստատութեան Արցախին օգնելու կազմակերպած հեռուստամարաթոնների աշխատանքներին, որոնց մասին մանրամասն գրել եմ 2002 թ. Երեւանում լույս տեսած իմ «Պէչլանի հայրենակցական միութիւն»: 1989-2001 թթ.» գրքում: Անկախ Հայաստանում տեղի ունեցող իրադարձութիւններից եւ այն բանից, թէ հաւաքուած գումարը որքանով է ծառայում իր նպատակին..., բոլոր հեռուստամարաթոնների ժամանակ նուիրատուութիւն արել եմ, իսկ թոշակի անցնելուց յետոյ 4 ընկերներով 100-ական տոլարով ենք մասնակցել եւ 1959 թուից վաղեմի ընկերս՝ Նուպար Յարութիւնեանը կանխիկ 400 տոլարը տանում յանձնում էր «Հայաստան» հիմնադրամի գրասենեակը: 2009 թ. Նուպարը եւ մի այլ ընկեր հեռացան երկրային կեանքից, Աստուած լուսաւորի հոգինը-ը: Նուիրատուութիւնը շարունակուած է հայրենիքի եւ հայրենիքի եւ սփիւռքի հայ ժողովրդին մի նպատակի շուրջ՝ հօգորացնել հայրենիքն ու սփիւռքը միասնական ջանքերով:

Քից, Աստուած լուսաւորի հոգինը-ը: Նուիրատուութիւնը շարունակուելու է, բայց...:

«Հայաստան» հիմնադրամի հեռուստամարաթոնի նպատակը միայն դրամ հաւաքելը չէ: Այն այդ առիթով համախմբում է հայրենիքի եւ սփիւռքի հայ ժողովրդին մի նպատակի շուրջ՝ հօգորացնել հայրենիքն ու սփիւռքը միասնական ջանքերով:

Գաղտնիք չէ, որ հայկական սփիւռքը հիմնականում առաջացաւ 1915 թ. Հայերի ցեղասպանութեան հետեւանքով եւ իր գոյութեան ընթացքում պայքարում է պահպանել ինքնութիւնը եւ փարուել հայրենիքին, որպէսզի կարողանա հարատեւել մինչեւ պայմաններ ստեղծվեն իր կեանքը գոյատեւելու հայրենիքում: Հետեւաբար, սփիւռքը սիրաշահելու ու համախմբելու համար անհրաժեշտ է նրա հետ անկեղծ վարուել, վստահութիւն ձեռք բերել, հաշուի առնել նրա կարծիքը եւ յարգել Հայաստանում ներդրում կատարող սփիւռքահայերին՝ չվնասել նրանց, ունեցուածքը ձեռքնեցից չխլել ... ու ահ տալով չվնասել հայրենիքից: Անհրաժեշտ է նրանց (ինչպէս նաեւ Հայաստանի ժողովրդի) համար իրաւական դաշտի ուժը կիրառել ու անձնական ունեցուածքի ապահովութիւնը երաշխաւորել պետական մակարդակով: Եթէ Հայաստանի ղեկավարները այս քայլին դիմէին ժամանակին, սփիւռքահայ ներդրողը չէր հրապարակուի ու հեռանալ հայրենիքից եւ այսօր կունենայինք զգալի բարգաւաճ Հայաստան:

Հեռուստամարաթոնը նաեւ առիթ է հանդիսանում բազմաթիւ իրար կորցրած հարազատների ի յայտ գալուն: Այս կապակցութեամբ նշեմ հետեւեալը.

1915 թ. Հայերի ցեղասպանութեան ժամանակ 3 քեռիներիցս մէկն է ողջ մնացել, որը, չնայած որպէս գրագէտ թուրքական բանակում եղել է բանակի հրամանատարի քարտուղարը եւ մեծ յարգանք է վայելել, սակայն չհաղուրժելով թուրքերին փախել է Եգիպտոս, բնակութիւն հաստատել Գահիրէում, ամուսնացել ու երկու տղայ է ունեցել, որոնք բարձրագոյն կրթութիւն են ստացել, բայց հայրենի գրել-կարդալ չեն իմացել: Քանի դեռ ողջ էին քեռիս ու կինը մենք Հայաստանում նամակակցում էինք նրանց հետ: Մամաս ու եղբայրն այս աշխարհից հեռացան իրար տեսնելու կարօտը սրտերում: Մեր կապը կտրուեց նրանց տղաների հետ: Անցեալ տարուս՝ 2009 թ. հեռուստամարաթոնի ժամանակ հեռուստացոյցի էկրանին ցուցադրուող նուիրատուների անունների մէջ կարդացի քեռիս տղայի՝ Վահրամ Մուրադեանի անունը՝ ժնեւից, որը հիմնադրամին նուիրել էր 320 եւրօ: Ծատ ուրախացայ, որ հիմնադրամի միջոցով կարող եմ կապ ստեղծել նրա հետ: Դեկտեմբեր 14-ին զանգահարեցի «Հայաստան» հիմնադրամի գրասենեակը Լոս Անճելոսում: Կրեկ անունով մի երիտասարդ պատասխանեց զանգիս, որը սփիւռքահայ էր: Ես աւելի ուրախացայ, քանի որ սփիւռքահայը ցեղասպանութեան արհարարը քննարկել է իր կաշուի վրայ եւ նրա սերունդը աւելի շուտ կը հասկանայ քեզ: Նրան պատմեցի քեռիս ու մամայիս պատմութիւնը եւ խնդրեցի, եթէ հնարաւոր է գտնելու ինձ յայտնել Վահրամի հեռախօսի համարը: Նա խոստացաւ, բայց խոստումը մնաց օդում...:

Այս տարուայ (2010 թ.) Հոկտեմբերի 21-ին նորից զանգեցի գրասենեակ եւ քարտուղարուհուն՝ Ազատուհուն խնդրեցի լսափողը փոխանցել տնօրէնին՝ պրն. Սարգիս Քոթանջեանին, որպէսզի նրա օգնութեանը դիմեմ այդ հարցում: Ազատուհին յայտնեց, որ նա տեղում չէ, ինչ հարցով եմ զանգում: Ես նրան պատմեցի վերոյիշեալ պատմութիւնը: Նա խոստացաւ իմ խնդրանքը անյապաղ հաղորդել տնօրէնին: Ես շնորհակալութիւն յայտնեցի ու սպասեցի պատասխանին ու չստանալով այն, մի քանի օր յետոյ նորից զանգեցի: Ազատուհին տարբեր մօտեցում ունեցաւ՝ տնօրէնը խիստ զբաղուած է ու համարեա տեղում չի լինում եւ այլն: Հետագայ զանգերով ես այդպէս էլ չկարողացայ խօսել նրա հետ: Երեւի նրան չի հետաքրքրում այդպիսի «մանր-մոնր» հարցերը, բայց հիմնադրամի համար դրամ հաւաքելուց:

Պրն. Քոթանջեանը վիրաւորեց ոչ միայն իմ ինքնասիրութիւնը, այլ յանձին ինձ՝ ամբողջ հայ ժողովրդի ինքնասիրութիւնը, չէ՞ որ զանգողը կարող էր լինել ցանկացած հայ: Բայց եթէ զանգողը նրան յայտնէր, որ շօշափելի գումար է նուիրելու հիմնադրամին, նա անմիջապէս կը պատասխանէր զանգին: Չի կարելի բիւրոկրատական վերաբերմունքով արհամարհել ցանկացած մարդուն որտեղ էլ լինի, մանաւանդ Ամերիկայում: Նա պէտք է հասկանայ, որ ինքը ժողովրդի համար է աշխատում, որի լուծմաներից է գոյանում հիմնադրամի ֆոնտը եւ պարտաւոր է յարգել իւրաքանչիւր հայի բեկորն ու պատշաճ վերաբերմունք ունենալ նրա նկատմամբ: Չպէտք է մոռանալ, որ հիմնադրամի գրասենեակներում աշխատողների մեծ մասի եկամուտները հիմնադրամի ֆոնտից են: «Հայաստան» հիմնադրամի գրասենեակներն ու Հայաստանի այլ կառույցներն սփիւռքում պէտք է կազմաւորուեն բարձր ազգային գիտակցութեամբ, ազգասեր, կիրթ եւ բարեհամբոյր աշխատողներից, որոնք իրենց հետ շփուող անհատներին ձգեն դէպի հիմնադրամն ու հայրենիքը սիրալի վերաբերմունքով:

Սփիւռքն ապրում է հայրենիքով եւ նաեւ հանդիսանում է նրա թիկունքը: Հայրենիքն իր արարքով պէտք է վստահութիւն ներշնչի սփիւռքին: Ֆուտպոլային քաղաքականութիւնը եւ այդ առիթով Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանի ներկայութիւնը սփիւռքում շատ տհաճ հետեւանքներ ունեցաւ եւ մեծացրեց ճեղքը հայրենիքի ու սփիւռքի միջեւ: Սակայն սփիւռքը հասկանալով Հայաստանի պետական կայացման ճանապարհի դժուարութիւնները հայի գոյատեւման համար, աշխատում է ամէն կերպ օգտակար լինել Հայաստանին:

1980-ական թուականներին բազմաթիւ հայ երիտասարդներ իրենց կեանքով հատուցեցին Հայերի ցեղասպանութիւնը միջազգայնացնելու ճանապարհին, որից յետոյ աշխարհի բազմաթիւ պետութիւններ ճանաչեցին Հայերի ցեղասպանութիւնը:

2009 թ. Օգոստոսի 31-ին Շուեյցարիայի Յիւրիխ քաղաքում հայ-թուրքական յարաբերութիւնների մասին ստորագրուած արձանագրութիւնները ստուցեցին Հայերի ցեղասպանութեան միջազգայնացումը:



### ՎԵՑ ՄԻՏՔ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԶԱՍՈՒՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ընկերութեան եւ հասունութեան մասին այս վեց միտքերը անհրաժեշտ է յաճախ կարդալ ու լիչել:

1) Ընկերութիւնը ձեր գոյութեան եւ ներողամտութեան ապացոյցն է: Ընկերութիւնը ո՛չ միայն կ'օգնէ ուրիշի աչքերով ճանչնալ սեփական անձը, այլեւ՝ ընկերները ներելու ուժ կու տայ:

Իսկական ընկերը գիտէ ձեր տանջանքներուն մասին: Ան ստուերի նման միշտ ձեր կողքին է: Եւ մենք, սովորաբար, տկարութեան եւ հիասթափութեան ժամուն կը զգանք անոնց կարիքը:

2) Իսկական ընկերութիւնը օրհնութիւն է, որ կրնաք հասկնալ միայն կարեկցանքի եւ փոխըմբռնման միջոցով: Ընկերութիւնը կը հիմնուի փոխադարձ ներողամտութեան եւ վստահութեան վրայ: Ի հարկէ, ժամանակի ընթացքին կը բացայայտուին նաեւ ընկերներու թերութիւնները: Հէ՞ որ ընկերները պէտք է գիտնան մէկը միւսին խնդիրներուն, դժուարութիւններուն, սխալներուն մասին: Սակայն, իսկական ընկերը՝ քննադատելու փոխարէն, կը փորձէ գտնել անոր դրական կողմերը եւ

զնահատել զանոնք:

3) Ընկերութեան բարձրագոյն չափանիշը ո՛չ թէ սեփական անձին կամ ընկերով կատարելագործումն է, այլ այդ գործընթացին մասնակից ըլլալը: Իսկական ընկերը կը տեսնէ իր մտերիմ ընկերներուն թաքնուած հնարաւորութիւնները, կ'օգնէ անոնց զանոնք բացայայտելու եւ ուղեկից կ'ըլլայ այդ հնարաւորութիւններու իրականացման ճանապարհին, որ միայնակ հնարաւոր չէ անցնիլ:

4) Հիասթափութիւններէն, տիրութենէն եւ չարիքէն անհնար է խուսափիլ: Անոնք բոլոր կը դնեն մեր հոգիին մէջ եւ ժամանակի ընթացքին աւելի կը մեծնան ու կը խորանան: Բայց մեզմէ իւրաքանչիւրը պէտք է յաղթահարէ այս փորձութիւնը:

5) Հասունութեան ճանապարհը կ'անցնի կտորուած սրտով: Այս կտորուած սրտին շնորհիւ է, որ մենք կը սորվինք սիրել: Մարդուն հասանելի բոլոր ճանապարհները կ'աւարտին կտորուած սրտով:

6) Կտորուած սիրտը կը յուշէ մեզ, որ այլ ճանապարհ պէտք է փնտռել, քանի որ այլ ուղիներ չկան: Ան ցոյց կու տայ, որ մենք միշտ սիրած ենք ու պիտի սիրենք, բայց կու գայ ժամանակ, որ պէտք է նաեւ ազատ ձգենք:

### ԿԱՏԱՐԵԱԼ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԱՈԱՍՊԵՆՆԵՐ

- Երջանիկ յարաբերութիւններու մէջ գոյգերը միանման հետաքրքրութիւններ ունին- Իւրաքանչիւր մարդ ունի սեփական հետաքրքրութիւններ: Պէտք է կարծել, որ եթէ օփերա կը սիրես, իսկ կեանքիդ հաւանական ուղեկիցը տարուած է ֆութպոլով, ուրեմն խօսելու բան չէք ունենար եւ երջանիկ չէք ըլլար միասին: Հակառակը, անձնական հետաքրքրութիւնները ձեզ զրաւիչ կը դարձնեն զուգընկերով աչքերուն:

- Յարաբերութիւններուն սկիզբը անպայման պէտք է կայծ ըլլայ- Միշտ չէ, որ մեր յարաբերութիւնները կը սկսին անհաւանական սիրահարածութեամբ: Այդ պատճառով, հարկաւոր է ուշադրութիւն դարձնել ո՛չ միայն կրքին եւ կայծին, այլեւ՝ անվտանգութեան եւ յարմարաւէտութեան զգացողութեան, որ կը զգաս մարդու կողքին: Ամուր յարաբերութիւններու համար աւելի կարեւոր է միասին ծիծաղիլը:

- Երջանիկ գոյգերը երբեք չեն վիճիր- Չեն վիճիր միայն անոնք, որոնց համար ամէն ինչ նոյնն է: Չեն վիճիր միայն այն գոյգերը, որոնց յարաբերութիւնները աւարտին կը մօտենան: Պէտք է մտահոգուիլ փոքր տարածաշրջաններու համար, հաշտութիւնը պարզեւ պիտի ըլլայ:

- Ներդաշնակ յարաբերութիւններու մէջ հարկաւոր է միշտ եւ ամէնուր միասին ըլլալ- Պատրանք է կարծիքը, որ երջանիկ գոյգերը երբեք չեն բաժնուիր: Իւրաքանչիւր մարդ վաղ թէ ուշ կ'ուզէ միանակ ըլլալ: Ներդաշնակ յարաբերութիւններու մէջ գոյգերը կը հասկնան ատիկա եւ իրարու անձնական ժամանակ եւ տարածութիւն կու տան շատ հանգիստ: Պէտք է դուն քեզ մեղադրես ընտանիքէդ հանգստանալու ցանկութեան համար: Ատիկա կ'առաջանայ ո՛չ այն պատճառով, որ ոեւէ մէկը այլեւս չի սիրեր քեզ, այլ՝ հակառակը, ատիկա կ'օգնէ պահպանելու զգացմունքները, նոյնիսկ յարաբերութիւններուն նոր շունչ հաղորդելու:

- Երջանիկ յարաբերութիւններու մէջ զուգընկերները կը պաշտեն մէկը միւսին հարազատները- Պէտք է զուգընկերով մէջ շրջապատիդ հանդէպ միանշանակ սէր ակնկալել: Դուն նոյնպէս պարտաւոր չես սիրել անոր բոլոր ազգականներն ու ընկերները: Ձեզմէ իւրաքանչիւրը յարաբերութիւններու համար միայն միմեանց կ'ընտրէ, իսկ յետագային, հարկաւոր է միայն ճիշդ կազմակերպել ազգականներու եւ ընկերներու հետ փոխյարաբերութիւնները, ոչ ոքի նեղացնելու համար:

### ՊԱՅՈՒՍԱԿ ԿՐԵԼՈՒ ՁԵՐ ԿՐՆԱՅ ՇԱՏ ԲԱՆ ՊԱՏՄԵԼ ՁԵՐ ՄԱՍԻՆ

Պայուսակ կրելու ձեւը կը պարզուի, թէ կրնայ բացայայտել ձեր անհատականութեան շատ գիծեր:

Գաղտնիքներ: Ըստ մասնագէտներու, պայուսակը կրելու ձեւը կրնայ շատ բան պատմել մեր բնաւորութեան, սովորութիւններուն մասին: Նոյնը կը վերաբերի նաեւ մեր դրամապանակին: Չէ՞ որ անիկա մեր պայուսակի անբաժան մասնիկն է: Դրամապանակը միջոց է մեր կարգավիճակը, ճաշակը եւ ստեղծագործական ներուժը ցոյց տալ համար:

- Եթէ պայուսակը կը կրէք մէկ ուսին եւ զայն մարմնին մօտիկ կը պահէք, ուրեմն դուք գործնական էք: Նոր մարդոց հանդիպելու ժամանակ, կը փնտռէք յստակ նշաններ, որոնք պիտի յուշեն, որ անոնց կարելի է վստահիլ: Այսպիսի կանանց բնորոշ է զգուշութիւնը, կեդրոնացած ըլլալը: Անոնք կը զգան հասարակութեան մօտ խելացի ըլլալու անհրաժեշտութիւնը եւ կը հետեւին իրենց: Թէեւ որոշ հոգեբաններ համոզուած են, որ եթէ դուք պայուսակը ամուր կը սեղմէք ձեզի, ատիկա աւելի շատ վախ է, ցած ինքնագնահատական կամ ուղղակի անհանգստութիւն, որ դրամապանակը կրնան գողնալ:

- Եթէ պայուսակը կը կրէք մէկ ուսին եւ անիկա ազատ կը շարժի, ուրեմն ձեզ կարելի է համարել անհոգ անձնաւորութիւն, որ կը սիրէ ընդունիլ կեանքը այնպէս՝ ինչպէս որ է: Պէտք է նշել, որ ձեզի համար հաճելի է ձեր ոճը, սակայն դուք որոշակի ազատութիւն կը փափաքիք: Այսպիսի անձնաւորութիւնները չեն վազել ձեւական պիտակներու եւ մակնիշերու ետեւէն: Պայուսակը կրելու ոճը ցոյց կու տայ, որ դուք կը նախընտրէք ամէն ինչ ի ցոյց դնել, անկախ մակնիշէն կամ իրի գինէն:

- Եթէ պայուսակը կախուած է ձեռքէն, անիկա կը խօսի հեղինակութեան մասին: Ձեզի համար շատ կարեւոր է կարգավիճակը եւ դիրքը: Ձեռքի վրայ պայուսակը կը խօսի այն մասին, որ ձեր մօտ այնտեղ հաստ դրամապանակ է, բաւական նշանակալի գումարով: Դուք յստակ գիտէք ինչ կ'ուզէք ստանալ այս աշխարհէն:

- Եթէ պայուսակը ձեր ձեռքին է, այս ոճը կը խօսի նրբագեղութեան եւ հասարակութեան մէջ դիրքի մասին: Մարդիկ ձեզ կը համարեն ինքնավստահ, լաւ կազմակերպուած եւ հետաքրքրական անձնաւորութիւն: Ձեր յաւակնոտութիւնը ուղղակի կը փայլի, դուք կրնաք կեդրոնանալ խնդիրին վրայ:

Անոնք, որոնք այս կերպ կը կրեն պայուսակը՝ կրնան ուշադրութիւն գրաւել:

- Եթէ պայուսակը կը կրէք ձեր դիմաց եւ կը բռնէք զայն երկու ձեռքով, մարմնի լեզուի մասնագէտները կ'ըսեն, որ ատիկա ցոյց կու

տայ մարդոց ամչկոտութիւնը եւ ա՛յն, որ ան ստիպուած է պաշտպանել ինքզինք: Ձեզի համար հաճելի չէ ըլլալ ուշադրութեան առարկայ, դուք կը նախընտրէք բոլորէն հեռու մնալ: Շատ յաճախ երիտասարդ կանայք այդպէս կ'ընեն հասարակական վայրերու մէջ, երբ անոնք չեն ճանչնար մարդոց կամ ճնշուած իրավիճակներու մէջ են եւ կամ երբ պարզապէս ամչկոտ են:

- Ուսին վրայէն, պայուսակը առջեւ բռնելը ցոյց կու տայ, որ դուք կը սիրէք ազատութիւն, ոչինչ պէտք է խանգարէ ձեր շարժումները: Այսպիսի մարդոց համար հաճելի է իրենց պաշտպանուած զգալ: Այս միջոցը կ'օգնէ առաւելագոյն յարմարաւէտութեան հասնելու: Դուք կ'ուզէք դիւրութեամբ տեղաշարժուիլ ամբողջ աշխարհի մէջ, առանց սահմանափակումներու:

Ոմանք այդպէս կը կրեն պայուսակը, քանի որ կը կարծեն, որ ատիկա ամենամեղմամբ եւ հասարակ ձեւն է պայուսակ կրելու՝ զբօսանքի ժամանակ:

- Ուսին վրայէն, պայուսակը մէջքին կրելը ցոյց կու տայ, որ դուք բաւական հաւաքուած, ինքնավստահ անձնաւորութիւն էք, որ ազատօրէն կը վստահի այլ մարդոց: Դուք առաջ կ'ընթանաք, ունենալով յստակ նպատակ: Այսպիսի կիներ չեն սիրեր անհանգստանալ այն իրերուն համար, զորս իրենք կը կրեն: Ատոր փոխարէն, անոնք հիանալի կերպով կը յաղթահարեն կեանքի դժուարութիւնները եւ կը փափաքին կեանքին նայիլ լաւ տրամադրութեամբ եւ լաւատեսօրէն:

- Եթէ դուք ուսապարկ կը կրէք, ուրեմն աւելի անկախ էք եւ կ'ուզէք հոգալ ձեր եւ ձեր շրջապատի մասին: Թէեւ ազատութիւնը կը գրաւէ առաջին տեղը, սակայն դուք միշտ պատրաստ էք իւրաքանչիւր անկանխատեսելի իրավիճակի: Ձեր ուսապարկը միշտ ձեր հետ է, որեւէ հագուստի, որեւէ եղանակի պարագային: Ի տարբերութիւն անոնց, որոնք պայուսակները կը կրեն ուսին վրայէն, դուք չէք սիրեր ամէն ինչ ինքնահոսի ձգել: Դուք կը հաւատաք առողջ ապրելակերպին: Բացի այդ, ձեր նախազգացողութիւնը շատ զօրաւոր է: Դուք ուշադրութիւն չէք դարձնել ուրիշներու կարծիքին ձեր մասին եւ դուք կը յստակացնէք ձեր սեփական հայեացքները ու կը հպարտանաք ձեր ինքնուրոյնութեամբ:

- Եթէ դուք պայուսակ չէք կրեր, ուստի կեանքի մէջ միշտ կ'ուզէք ունենալ արտօնեալ դիրք, որուն ժամանակ ուրիշները իրենց վրայ կը վերցնեն հոգը: Այսպիսի անձը ամենաինքնավստահն է: Միւս կողմէն ատիկա կրնայ նշանակել, որ դուք ամբողջութեամբ ազատ էք եւ կ'ուզէք յարմարաւէտօրէն տեղափոխուիլ:

Պատրաստեց՝ ՆԱՐԻՆԷ Ն

**HARRY THE HANDYMAN SERVICES**

**Air Conditioning Repair  
Plumbing & Roofing  
Water & Gas Pipes • Fencing & Painting  
Iron Work Repair • Electrical Job**

Email: haroutig007@gmail.com

**Dependable • Reliable • Fast Work**

**CALL HARRY**

**818-219-3314**



NATIONAL NOTARY ASSOCIATION  
NOTARY PUBLIC

MEMBER

**Garine Depoyan**

626-755-4773  
554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106  
ghdepoyan@gmail.com

# ՄԱՐԶԱԿԱՆ

## Անպարտելի Արսէն Գուլամիրեանը նուաճել է WBA-ի Գօտին



Ֆրանսայում բնակուող 30-ամեայ Արսէն Գուլամիրեանը նուաճել է պրոֆեսիոնալ բռնցքամարտի առաջին ծանր քաշային կարգում WBA վարկածով թափուր գօտին:

Մարտելում կայացած ախոյեանական տիտղոսի համար մենամարտում հայ բռնցքամարտիկը 11-րդ ռաունդում նոկաուտի է ենթարկել կոտորիվուարցի Ռիչարդ Մերհին, որը ներկայացնում է Բելգիան:

Աւելի վաղ նշում էր, որ այս դիմակայութեան յաղթողը 120 օրում պէտք է մենամարտի WBA-ի վարկանիշային աղիւսակի երրորդ տեղը զբաղեցնող ռուսաստանցի Մաքսիմ Վլասովի հետ:

Պրոֆեսիոնալ ռինգում 23 մենամարտ անցկացրած Արսէն Գուլամիրեանը շարունակում է անպարտելի մնալ: 23 յաղթանակներից 15-ում նա առաւելութեան է հասել նոկաուտով:

Յիշեցնենք, որ Արսէն Գուլամիրեանը Լոնտոնի Օլիմպիական խաղերում Ֆրանսայի հաւաքականի 90 կգ քաշային կարգում ուղեգիր նուաճած միակ օլիմպիականն էր, սակայն չէր մասնակցել Օլիմպիական խաղերին: Նա նաեւ երեք անգամ դարձել է Ֆրանսայի մինչեւ 18 տարեկանների ախոյեան:

## Կարօ Մուրադը Յաղթել է Նոկաուտով եւ նուաճել IBO-ի Գօտին

Գերմանիան ներկայացնող հայ պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Կարօ Մուրադը նուաճել է կիսածանր քաշային կարգում IBO վարկածով աշխարհի ախոյեանի թափուր գօտին:

Գերմանիայի Համբուրգ քաղաքում կայացած մենամարտում 34-ամեայ Մուրադը նոկաուտով յաղթել է 37-ամեայ ամերիկացի Տրեւիս Ռեւեսին: Մենամարտն ավարտուել է 12-րդ ռաունդում: Հայ բռնցքամարտիկի հարուածաշարից յետոյ մրցավարը դադարեցրել է մենամարտը:

Կարօ Մուրադը 32-րդ յաղթանակն է տարել պրոֆեսիոնալ ռինգում, որում կրել է նաեւ 3 պարտութիւն եւ մէկ մենամարտ ավարտել ոչ ոքի: Նա 21-րդ անգամ յաղթեց նոկաուտով:

## Հայաստանի Հաւաքականը Պարտուեց Լիտվային

Ֆուտպոլի Հայաստանի ազգային հաւաքականը Վազգէն Սարգսեանի անուն «Հանրապետական» ստադիոնում Մարտի 2-ին տեղի ունեցած ընկերական խաղում նուազագոյն հաշուով պարտուեց Լիտվայի թիմին:

Խաղակեսի վերջին րոպէին հիւրերը բացեցին հաշիւը՝ օգտուելով հայերի պաշտպանութիւնում առաջացած բաց գօտիներից:

Երկրորդ խաղակեսի մեկնարկն անցաւ հանդարտ տեմպով: Հայաստանի հաւաքականի խաղն առջեւի գծում ակտիւացրեցին փոխարինման մտած Արաս Օզբիլիսը եւ Կամօ Յովհաննիսեանը սակայն արդիւնքը մնաց անփոփոխ:

Մարտի 23-ին տեղի ունեցած Հայաստանի եւ Էստոնիայի ազգային հաւաքականների ընկերական հանդիպումը ավարտուեց կոլապսով ոչ ոքիով:

ՖԻՖԱ-ի դասակարգման աղիւսակում Հայաստանը 91-րդ տեղում է, իսկ Էստոնիան 86-րդն է: Սա Հայաստանի եւ Էստոնիայի հաւաքականների 5-րդ հանդիպումն էր:

## Թոմաս Տուխելը «Արսենալը» Գլխավորելու Համար Մերժել է «Բաւարիային»

Դորտմունդի «Բորուսիայի» նախկին գլխավոր մարզիչ Թոմաս Տուխելը յաջորդ մրցաշրջանում գլխավորելու է Լոնտոնի «Արսենալը», գրում է Kicker-ը:

Օրերս գերմանացի մասնագէտը Միւնխենի «Բաւարիային» յայտնել է, որ չի գլխավորի գերմանական ակումբը: 44-ամեայ մարզիչը ցանկանում է աշխատել Անգլիայում եւ ընդունել է «Արսենալի» առաջարկը:

1996-ից «Արսենալը» գլխավորող Արսէն Վենգերի գործող պայմանագիրն ավարտուել է 2019-ի ամրանը:

Յիշեցնենք, որ Թոմաս Տուխելը Հայաստանի հաւաքականի եւ «Արսենալի» կիսապաշտպան Հենրիխ Միխիթարեանի հետ աշխատել է «Բորուսիայում»:

## Եւրա Մովսիսեանը Տեղափոխուեց «Եւրօրդեն»

Ֆուտպոլի Հայաստանի հաւաքականի նախկին յարձակուող Եւրա Մովսիսեանը կարիերան կը շարունակի Շուեդիայում:

30-ամեա ֆուտպոլիստը 6 ամսուայ պայմանագիր է կքնել շուեդական «Եւրօրդենի» հետ: Պայմանագիրն ունի երկարաձգելու հնարաւորութիւն, յայտնում է ակումբի կայքը:



Շուեդիայի ակադեմիայի առաջնութիւնում «Եւրօրդենը» գրաւել է երրորդ տեղը եւ նուաճել Եւրոպայի լիգայի որակաւորման փուլի ուղեգիր: Շուեդիայում նոր մրցաշրջանը կը մեկնարկի Ապրիլի 1-ին: Շուեդիայի առաջնութեան առաջին տուրում «Եւրօրդենը» կը հիւրընկալի «Օստերսունդին»:

Յիշեցնենք, որ Եւրա Մովսիսեանի նախորդ ակումբն էր ամերիկեան «Ռեալ Սոլթ Լէյքը», որին նա միացել էր 2016-ին: Նախկինում նա հանդէս է եկել նաեւ ամերիկեան «Կանգաս Սիթիում», դանիական «Ռանդերսում» ու ռուսական «Կրասնոդարում»: «Ռեալ Սոլթ Լէյքը» կազմում յարձակուող խաղացել է նաեւ 2007-2009-ը:

## Իբրահիմովիչը Գնել է Los Angeles Times-ի Էջը՝ Լոս Անճելըսին Ողջունելու Համար

Անգլիական «Մանչեսթեր Յունայթեդից» ամերիկեան «Լոս Անճելըս Գեյաքսի» տեղափոխուած Զլատան Իբրահիմովիչը ողջունել է Լոս Անճելըս քաղաքին:

Շուէտ յարձակուող գնել է Los Angeles Times թերթի մարզական բաժնի էջերից մէկը: Էջի վրայ եղել է միայն հետեւեալ գրառումը՝ Dear Los Angeles, You're welcome («Սիրելի Լոս Անճելըս, ողջունում եմ ձեզ»):

Յիշեցնենք, որ Զլատան Իբրահիմովիչը 2016-ի ամրանը ֆրանսական ՊՍԺ-ից էր տեղափոխուել «Մանչեսթեր Յունայթեդ», որի կազմում անցկացրած 53 խաղերում դարձել 29 կոլի եւ 9 կոլային փոխանցման հեղինակ: Օրեր առաջ նա խզել էր անգլիական ակումբի հետ պայմանագիրը:



## Արժենթինացի Առանց Մեսիի Յաղթեց Իտալիային, Ռոնալդուի Դուբլը Կամային Յաղթանակ Բերեց Պորտուգալիային

Արժենթինայի եւ Իտալիայի հաւաքականներն ընկերական հանդիպում անցկացրին Մանչեսթերում: Արժենթինացիները յաղթեցին 2:0 հաշուով:

«Բարսելոնայի» յարձակուող Լիոնել Մեսին Արժենթինայի հաւաքականի պահեստայինների թւում էր եւ փոխարինման դուրս չեկաւ:

Պորտուգալիայի հաւաքականը աւելացուած ժամանակում Մադրիդի «Ռեալի» առաջատար Կրիշտիանու Ռոնալդուի դուբլի շնորհիւ կամային յաղթանակ տարաւ Եգիպտոսի թիմի նկատմամբ՝ 2:1: Հաշիւը բացել էր «Լիվերպոլի» կիսապաշտպան Մոհամեդ Սալահը:

Աշխարհի Ախոյեան Գերմանիայի եւ Սլոնիայի հաւաքականները մէկական կոլ փոխանակեցին՝ 1:1:

Անգլիացիները «Մանչեսթեր Յունայթեդի» կիսապաշտպան Ջեսի Լինգարդի Կոլի շնորհիւ պարտութեան մատնեցին Հոլանդիայի թիմին՝ 1:0:

Ֆրանսայի հաւաքականը տանը 2:3 հաշուով պարտութիւն կրեց Կոլումբիայի թիմից, թէեւ ընթացքում յաղթում էր 2:0 հաշվով:

- Ընկերական հանդիպումներ
- Արժենթինա - Իտալիա՝ 2:0
- Գերմանիա - Սլոնիա՝ 1:1
- Հոլանդիա - Անգլիա՝ 0:1
- Պորտուգալիա - Եգիպտոս՝ 2:1
- Լեհաստան - Նիդերլանդներ՝ 0:1
- Սերբիա - Մարոկկո՝ 1:2
- Շոտլանդիա - Կոստա Ռիկա՝ 0:1
- Թունիս - Իրան՝ 1:0
- Սաուդեան Արաբիա - Ուկրաինա՝ 1:1
- Ֆրանսա - Կոլումբիա՝ 2:3

### ՉԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՎ 15-ԷՆ

տարիներ միասին ճամբորդում եւ շաբաթներ շարունակ ապրում էին ք միեւնոյն հիւրանոցներում:

3- Խվորոստովսկի Գաեւ յայտնի է եղել իր բացառիկ համեստութեամբ, իր գործընկերների ու, ինչու՞ չէ, Գաեւ Եսմաբեմի բանուորների հանդէպ իր ունեցած բարութեամբ: Որքա՞ն յաճախ են օպերայի աշխարհում պատահում ման երեւոյթներ: Եւ արդեօք Դուք հաւատո՞ւմ եք, որ աստղ հանդիսացող երաժշտի մեծահոգութիւնը իրակամում յանգեցնում է յաջողութեան այնպիսի բարդագոյն գործերում, ինչպիսիք են օրինակ հանրութեան առջեւ ելոյթ ունենալը կամ օպերայի ձայնագրութիւնը:

Պ- Ես պէտք է ընդունեմ, որ Դմիտրին ծայրաստիճան պահանջկոտ էր հենց ինքն իր հանդէպ եւ մինչեւ վերջին շունչը նուիրում էր գործին՝ թէ՛ Ֆրիդլանդ, թէ՛ Երաժշտական, թէ՛ արտիստական, եւ թէ՛ դրամատիկական առումներով: Նա պաշտում էր աշխատել այնպիսի գործընկերների հետ, ովքեր իրենց կեանքը նուիրել էին իրենց արուեստին, ովքեր շարունակ փնտռում էին յայտնի օպերաների նոր, իւրօրինակ, եւ ամենակարեւորը՝ համոզիչ մեկնաբանութիւններ, որոնցում նա հանդէս էր գալիս իր գործընկերների հետ: Նա միշտ աջակցում էր ինձ եւ շատ շրջահայաց էր ու խոհեմ՝ մեր համագործակցութեան տարբեր կողմերի շուրջ իր մեկնաբանութիւններում: Նա գիտէր, որ ես կը հետեւեմ իրեն, ուր էլ որ իր երաժշտական երեւակայութիւնն ու զգացմունքները տանեին իրեն ելոյթի պահին: Փոխադարձ վստահութիւնն ու յարգանքը կենսական նշանակութիւն ունեն ցանկացած ընկերութեան ժամանակ եւ յատկապէս երաժշտութեան ասպարէզում, որտեղ շատ բան կախուած է մեկակատարի ու դիրիժորի միջեւ եղած անշոշափելի մի թելից: Իր կատարած ամեն գործում գերազանցութեան հասնելու իր ձգտումից բացի, Դմիտրին (որպէս օպերային երգիչ) բացառիկ էր նաեւ այն առումով, որ երբեք չէր ուշանում փորձերից եւ միշտ 100% պատրաստուած էր ներկայանում: Նա գնահատում էր, երբ իր գործընկերները միմիանց յարգում էին աշխատանքային էթիկայի նոյն կանոններով:

3- 2018թ-ի Մարտի 18-ին, Լոնտոնի Թագաւորական օպերային թատրոնում տեղի ունեցաւ Դմիտրի Խվորոստովսկու յիշատակի Գուրուած համերգ, որտեղ հանդէս եկան իր ընկերներից շատերը, որոնց մեջ էին Թագաւորական օպերայի երգչախումբը, եւ երաժշտական տնօրէն Անտոնիո Պապպանոն: Ի՞նչ կարող էք պատմել Թագաւորական օպերային թատրոնի հետ ունեցած խվորոստովսկու կապի մասին:

Պ- Դմիտրին մէկ օրում դարձաւ գերաստղ, երբ 1989-ին յաղթեց BBC-ի Աշխարհի երգիչը մրցոյթում: Դրանից շատ շանցած՝ նա տեղափոխուեց Լոնտոն եւ դարձաւ Թագաւորական Օպերայի աստղը յաջորդող թատերաշրջաններում: Լոնտոնն իր տունն էր, իր երեխաների ծննդավայրը, եւ Թագաւորական օպերան դարձաւ նրա ամենալիշարժան ներկայացումներից մի քանիսի վկան: Բարեբախտաբար, դրանից որոշները պահպանուել են DVD տարբերակով: Նրա երկարատեւ համագործակցութիւնը Թա-

գաւորական օպերայի Երաժշտական դեկավար, բացառիկ տաղանդի տէր Անտոնիո Պապպանոյի հետ հրաշալի էր: Նրանք միասին են աշխատել շատ ստեղծագործութիւնների վրայ եւ միմիանց հանդէպ մեծագոյն յարգանք են տածել:

3- Խվորոստովսկի Գաեւ Չեզ հետ միասին 2012թ-ին յայտնուել է Երեւանի Օպերային թատրոնի բեմում՝ մեծապէս յուզելով թէ՛ հանդիսատեսին, եւ թէ՛ քննադատներին: Ի՞նչ տպաւորութիւններ էր Գաեւ ստացել 3 այստանի մայրաքաղաքի ելոյթներից:

Պ- Հայաստանում մեր առաջին համատեղ համերգը (որը տեղի է ունեցել Հայաստանի Ֆիլհարմոնիկ նուագախմբի հետ Խաչատրեան համերգասրահում 2012թ-ին) երկակի նշանակութիւն ունեցաւ: Նախեւառաջ՝ դա Դմիտրիի առաջին սոլո ներկայացումն էր Երեւանում, եւ յետոյ՝ Դմիտրին սիրում էր երգել մի երգ, որը կոչւում էր «Կեչիներ շողողացող ձայնը», որի հեղինակն իմ հօրեղբայրն է՝ Կոնստանտին Օրբելեանը: Հօրեղբայրս այդ ժամանակ ապրում էր Կլեմտեյում, եւ յատուկ Երեւան էր ժամանել այդ երեկոյ Դմիտրիի հետ ելոյթ ունենալու նպատակով: Հօրեղբօրս երգի կատարման ժամանակ, նուագախմբի բոլոր անդամների աչքերին արցունքներ յայտնուեցին, եւ, իհարկէ, իմ այտերով էլ էին արցունքները հոսում: Դա չիշարժան ու պատմական պահ էր, եւ հօրեղբօրս համար շատ կարեւոր էր աշխարհի ամենափառահեղ ու զեղեցիկ բարիտոնի հետ նոյն բեմում գտնուելը: Բացի այդ, Դմիտրիի անհաւատալի մեկնաբանութիւններով հնչեցին ոչ միայն մեներգեր իտալական, ֆրանսական ու ռուսական հրաշալի օպերաներից, այլեւ մեր սիրելի Աննօ Բաբաջանեանի, հանրայայտ ռուս կոմպոզիտոր Ալեքսանդր Պախմուտովայի ու իմ հօրեղբօր ստեղծագործութիւններից:

Մեր երկրորդ համերգը Երեւանում Դմիտրիի հետ տեղի ունեցաւ 2015թ-ի Մայիսի 12-ին Երեւանի Օպերային թատրոնում: Սա մի շատ իւրայատուկ իրադարձութիւն էր, քանի որ նուիրուած էր Երկրորդ Համաշխարհային Պատերազմի աւարտի 70-ամեակին: Մենք Մոսկուայից ժամանեցինք Ռուսաստանի Դաշնութեան Պաշտպանութեան Նախարարութեան Նուագախմբի ու Երգչախմբի հետ եւ համերգ տուեցինք Երկրորդ Համաշխարհային Պատերազմի վետերաններին ու Հայաստանի ժողովրդի համար:

Համերգից յետոյ Նախագահ Սերժ Սարգսեանն ինձ պարգևատրեց Հայաստանի Հանրապետութեան Բարեկամութեան շքանշանով, իսկ Մշակոյթի նախարար Յասմիկ Պողոսեանը Դմիտրիին շնորհեց ՀՀ Մշակոյթի Նախարարութեան Ոսկէ Մետալը:

Դմիտրին սիրում էր Հայաստանում լինել: Իր ամբողջ կեանքի ընթացքում նա աշխատել է միջազգային բեմերի լաւագոյն եւ կարեւորագոյն հայ երգիչների հետ: Նրա մտերիմ ընկերներն ու գործընկերներն էին Բարսեղ Թումանեանը եւ Գեղամ Գրիգորեանը: Դմիտրին աշխատել է նաեւ Գեղամի դստեր՝ բացառիկ սոպրանօ Յասմիկ Գրիգորեանի հետ: Նրանք միասին հանդէս են եկել Մոսկուայում, 2015 թ. Յունուարին Ռուբինշտէյնի «Դեմոնը» ցնցող բեմադրութեամբ:

### ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՎ 14-ԷՆ

Այս է համոզումը ամէն մէկ հայու, ապրի ան այսօր Արարատի շուքին տակ թէ՛ Նիակարայի ջրվէժի խլացնող աղմուկներուն մէջ:

Անհունօրէն հպարտ եմ ես մեր ներկայով, որ գրաւականն է մեր երազին, գալիքին:

Եւ մի մոռնաք երբեք, որ երբ կայ հողը, երկիրը, կայ նաեւ ապահով:

Ու ես գիտեմ, եւ դուն ալ գիտես, որ մեր միակ ճանապարհը հողն է, մեր հայրենիքը, մեր Հայաստանն աշխարհը:

Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ, որ ես կը գրեմ միայն ճշմտութիւնը»:

Արդարացի կերպով, Թորոս Թորանեան շարժուն ու ճշմարիտ համայնագիտարան մըն է, արդի հայ մտածումին իրական ու ապրող աշխարհակալ մը:

Թորոս Թորանեանի գրական վաստակին ու տարիքին նուիրուած այն բոլոր ոգեկոչումները, որ այս ամիսներուն տեղի ունեցան եւ պիտի

### ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԴՅՈՒՄՏԱՄԱՐԱԹՈՆԻ ԱՌԹԻ

#### ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԵՎ 16-ԷՆ

յին ճանաչման գործընթացը: Յենուելով արձանագրութիւնների վրայ, ԱՄՆ-ի նորընտիր նախագահ Բարաք Օբաման չկատարեց իր խոստումը, չճանաչեց Հայերի ցեղասպանութիւնը՝ նշելով, որ այդ հարցը քննարկում է Հայաստանի ու Թուրքիայի միջեւ: Դա դեռ բաւական չէր: Այս օրերին աւելի ահաւոր նորութիւն յայտնուեց: Ըստ տարածուած լուրերի պարզուեց, որ Հայաստանի նախագահ ԱՄՆ-ի փոխնախագահ Ջօ Պայտընին եւ խնդրել նրան Հայերի ցեղասպանութեան հարցով ճշուած չգործադրել կոնգրեսի վրայ, քանի դեռ հայ-թուրքական բանակցութիւնները ընթացքի մէջ են: Որքանօ՞վ է ճիշտ այդ լուրը չզիտեմ, սակայն այն խառնաշփոթ ստեղծեց հայութեան մէջ: Սփիւռքի գոյութիւնը պայմանաւորուած է նաեւ միջազգային հանրութեանը Հայերի ցեղասպանութիւնը ճանաչելի դարձնելու պայքարով, սակայն ըստ բացառական զաղտնի տեսագրութեան, Հայաստանի նախագահը զաղտնի գործարք է կնքում ԱՄՆ-ի փոխնախագահի հետ Հայերի ցեղասպանութեան հարցով: Միւս կողմից էլ Սփիւռքի նախարարութիւնը յայտարարութիւններ է կատարում ներգաղթի մասին, երբ Հայաստանի ժողովրդի ստիպալ-տնտեսական պայմանները նախանձելի վիճակում չեն:

Հեռուստամարաթոնը կատարուած է հիմնականում Արցախի եւ մասամբ էլ Հայաստանի սոցիալ-տնտեսական կարիքները հոգալու համար, բայց Արցախի շատ գիւղերում այսօր միայն մեծահասակներ են մնացել: Երիտասարդութիւնը լքում է հայրենի գիւղն ու իր կեանքը կապում քաղաքի հետ: Արցախի հայաթափման գործընթացին նպաստում են նաեւ Հայաստանի կառավարութեան արցախցի ղեկավարները, Երեւան բերելով իրենց գերդաստաններին ու չմտածելով Արցախի ապագայի մասին: Այսօր համարեա բնակչութիւն չկայ Արցախի սահմանամերձ գիւղերում: Եթէ բնակչութիւն չկայ, ո՞վ է տէր կանգնելու հայրենի հողին ու ունեցուացքին...: Կարծում ենք, որ Հայաստանի կառավարութիւնը ժամանա-

ուներան Երեւանին մէջ եւ այլուր, ) 1 Մարտ 2018, «Աւետիք Իսահակեան» գրադարանի սրահին մէջ ու 3 Մարտ 2018, Արագածոտն Մարզի Ուշի գիւղի «Նիկոլ Աղբալեան» բարձրագոյն դպրոցի «Լեւոն Շանթ» թատերասրահին մէջ(, ոչ թէ նուիրուած էին ու պիտի նուիրուած ըլլան Թորոս Թորանեանի քաղցր լիշատակին այլ իր ցարդ ստեղծագործող վաստակին ու գոյատեւող կեանքին: Կը տեղեկանանք թէ Թորանեանին նուիրուած ցերեկային պիտի կազմակերպեն նաեւ ՀՀ Սփիւռքի նախարարութիւնը Հայաստանի գրողներու միութեան համագործակցութեամբ, Համագգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան Երեւանի գործադիր գրասենեակը եւ քանի մը ուրիշ մշակութային հաստատութիւններ: Առանց մեծ բաւեր գործածելու Թորանեանն այս բոլորին արժանի է զգալի նկատումներով:

Գրիչոյ ու կեանքը մշտաճոս, սիրելի Թորոս: ՄԱՐԳԱՐ ՇԱՐԱՊԻԱՆԵԱՆ Գիւղ Ուշի, Արագածոտնի Մարզ

կին մեծ սխալ թոյլ տուեց՝ Երեւանի արցախցի փախստականներին չստիպեց վերադառնալ Արցախ:

Հայաստանում անընդհատ հայտարարվում է, որ Արցախն ու Հայաստանն ունեն հզոր բանակներ: Դա անհրաժեշտ, բայց բաւարար պայման չէ անվտանգութեան համար: Այդ բանակներին թիկունք է պէտք: Եթէ Աստուած չանի պատերազմ սկսուի, ո՞վ պիտի ապահովի բանակի մատակարարումը, երբ գիւղերում բնակչութիւն չկայ:

«Հայաստան» հիմնադրամի օգնութեամբ կառուցուած Արցախի գիւղերն իրար կապող ճանապարհները, Գորիս-Ստեփանակերտ ռազմաքաղաքական եւ տնտեսական մեծ նշանակութիւն ունեցող մայրուղին ու այլ կառուցանքներ, Արցախի գիւղերի զարգացման համար հիանալի պայմաններ են ստեղծում: Ուստի անպակտ պէտք է բնակեցնել դատարկ գիւղերը եւ ազատագրված տարածքները, որի համար շատ ենք ուշացել: Պետութիւնը կամ երկիրը ժողովրդի թուաբանակով է հզոր, եթէ բաւարար ժողովուրդ չկայ, միայն բանակը բաւարար չէ երկրի սահմաններն ապահով պահելու համար:

Սփիւռքն աշխատում է բոլոր հնարաւոր նիջոցներով օգնել հայրենիքին, այդ թւում նուիրատուութիւններով «Հայաստան» հիմնադրամին, որպէսզի հայրենիքը արագ ոտքի կանգնի: Նա պէտք է շարունակի իր օգնութիւնը բոլոր ասպարէզներում, որպէսզի բարելաւուի Հայաստանի հայի սոցիալ-տնտեսական պայմանները եւ վերջինս մոռանայ արտագաղթելու մասին: Իսկ Հիմնադրամի գրասենեակները պէտք է համալրուեն ազգասէր ու բանիմաց աշխատողներով:

Հաւատում ենք «Հայաստան» հիմնադրամի հեռուստամարաթոնի յաջողութեանը, որը կը սատարի նաեւ հայութեան համախմբմանը, իսկ հիմնադրամի միջոցով 2011 թ. կը շարունակուի տնտեսական զարգացումներն Արցախում ու Հայաստանում խաղաղ պայմաններում:

Յաջողութիւն մաղթելով «Հայաստան» համահայկական հիմնադրամին յոյսով ենք նաեւ, որ վերոնշեալ հարցերն ուշադրութեան կ'արժանան Հայաստանի համապատասխան գերատեսչութիւնների կողմից:



# ԱՌԻԱՌՈՒԹԵԱՆ ՔԱՅԼԱՐՈՇԻ

## Ապրիլ 24 ԿԷՍՕՐՈՒԱՆ 12 ԻՆ

Փան Փասիֆիք Փարբէն  
7600 BEVERLY BLVD, LOS ANGELES  
Թրքական Հիւպատոսարան

Հանրակարգերը պիտի մեկնին  
առաւօտեան ժամը 11:30 ին  
ԿԼԵՆՏԵՅԼԷՆ  
ՊԸՐՊԵՆՔԷՆ  
ԼԱ ՔՐԵՍԷՆԹԱ/ԹԱՀԱՆԿԱԷՆ  
ՓԱՍԱՏԻՆԱԷՆ  
ՄՈՆԹԵՊԵԼԼՈՇԵՆ  
ՀՈԼԻՎՈՒՏԷՆ  
ՆՈՐԹ ՀՈԼՎՈՒՏԷՆ  
ԷՆՍԻՆՈՇԵՆ  
ՔԱՆՈԿԱ ՓԱՐՔ/ՎԱՆ ՆԱՅԶԷՆ

Փոխադրամիջոցներ Ապահովելու եւ  
Յաւելեալ Տեղեկութիւններու համար  
Հեռաձայնեցէք 888 924 1915 թիւին:

